# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

36ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 14 (1764) ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 16, 2016
VOLUME 36, NO. 14 (1764) SATURDAY, APRIL 16, 2016

Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## Սահմանին Վրայ Կը Տիրէ Յարաբերական Անդորր

### «Զիջումները Չեն Կրնար Ըլլալ Միակողմանի»,- Կը Յայտարարէ ԼՂՀ

Լեռնային Ղարաբաղի սահմաններուն վրայ ներկայիս կը տիրէ յարաբերական անդորր, սակայն ատրպէյճանական զօրքերը մերթ ընդ մերթ կը խախտեն հաստատուած զինադադարը յատկապէս կրակոցներ ուղղելով Մարտակերտի եւ Հադրութի ուղղութեամբ:



Հայկական զօրքերը պաշտպանական դիրքեր հաստատած են սահմանի վրայ

Ըստ Արցախի Պաշտպանութեան Բանակի հաղորդած վերջին տեղեկութիւններուն, հայկական կողմը կը հետեւի հակառակորդի գործողութիւններուն եւ անհրաժեշտութեան պարագային կը դիմէ համապատասխան քայլերու:

Ապրիլ 12-ի դրութեամբ, հայկական կողմն ունի 65 զոհ, 121 վիրաւոր եւ մէկ անհետ կորած:

Քաղաքական գետնի վրայ Ղարաբաղի Ազգային Ժողովի Նախագահ Աշոտ Ղուլեան յայտարարեց, որ զիջումները չեն կրնար միակողմանի ըլլալ: «Այս իմաստով, այս ժամանակահատուածում, ես կարծում եմ, որ Ատրպէյճանի գործողութիւնները թողում են հակառակ էֆեկտը՝ քանի Ատրպէյճանը ցոյց է տալիս ապակառուցողական՝ իրավիճակը սրելու քաղաքականութիւն: Ես կարծում եմ, որ ոչ միայն Ղարաբաղից, այլեւ ընդհանուր հայկական իրականութեան մէջ դիրքորոշումը ղարաբաղեան հիմնախնդրի կարգաւորման առումով աւելի է կարծրանում եւ ուրիշ կերպ դա չի կարող լինել», - «Ազատութիւն» ռատիոկայանին ըսաւ Ղուլեան:

Հարցին, թէ խնդիրը լուծելու համար ղարաբաղեան կողմը պատրա՞ստ է զիջումներու, Ղուլեանը պատասխանեց. - «Դա չի կարող լինել միակողմանի ճանապարհ: Ինքնապաշտպանութեան հանգամանքը, տարածաշրջանում մեր ձեռքբերումները պահելու, յաջողութիւնները ամրապնդելու այս հրամայականը մեզ յուշում է, որ մենք չենք կարող մեզ թոյլ տալ, որպէսզի մենք խօսենք ինչ-որ կարգի զիջումներից՝ ունենալով այդ մշտական սպառնալիքը»:

ԼՂՀ Ազգային Ժողովի նախագահը շեշտաեց, որ նոյնիսկ համաձայնութեան գալու պարագային կարելի չէ վստահիլ Ատրպէյճանական կողմի խոստումներուն:

Միւս կողմէ, աբողջ շաբթուայ ընթացքին արձանագրուեցան դիւանագիտական բազմաթիւ այցելութիւններ ու հանդիպումներ, ստեղծուած վտանգաւոր կացութեան առաջքը առնելու նպատակով:

Շար.ը էջ 4

## Հաւաքուած Գումարը Պիտի Յատկացուի Բանակի Սպառազինման

Արցախի պաշտպանութիւնը համալրելու նպատակով՝ ԼՂՀ վարչապետի գլխաւորութեամբ ստեղծուած շտաբը, ամփոփելով իր 7-օրեայ աշխատանքը, տեղեկացուց, որ Ապրիլ 8-ի տուեալներով՝ ֆինանսներու նախարարութեան դրամատնային հաշիւներուն փոխանցուած է մօտ 1 միլիարդ 139 միլիոն դրամ, 1 միլիոն տոլար, 7,700 հազար եւրօ եւ 13 միլիոն ռուբլի:

Ինչպէս նախօրօք յայտարարուած է, հաւաքագրուած նիւթական միջոցները պիտի ուղղուին պաշտպանութեան բանակի հետագայ սպառազինման:

Այս առթիւ հրապարակուած պաշտօնական հաղորդագրութեան մէջ ըսուած է,-

«Շտաբը դասակարգում եւ բաշխում է Արցախ ուղարկուած մեծ քանակութեամբ պարենային ու իրային ապրանքները նպատակային՝ դրանք ուղարկելով առաջնագիծ եւ բաժանելով տարահանուած բնակիչների միջեւ:

«Շտաբը խորին շնորհակալութիւն է յայտնում բոլոր հայրենակիցներին, ովքեր օպերատիւ արձագանքել են օգնութեան կոչին եւ իրենց ուժերի ներածին չափով օժանդակութիւն են ցուցաբերել բանակին ու դժուար կացութեան մէջ յայտնուած արցախահայութեանը:

Շտաբը կը շարունակէ գործել՝ համագործակցելով պաշտպանութեան բանակի հրամանատարութեան հետ: Շտաբի կողմէ շնորհակալութիւն կը յայտնուի Արցախով ապրող բոլոր հայրենակիցներուն:

Ֆինանսական հանգանակութիւնը շարունակւում է»:

## Հայաստան Բողոք Յայտնած Է Իսրայէլին

Իսրայէլեան մամուլը կը հաղորդէ որ, Հայաստանը բողոք յայտնած է Իսրայէլին, Ատրպէյճանին զէնք վաճառելուն կապակցութեամբ:

Հայաստանի բողոքը հետեւած է ատրպէյճանական բանակի կողմէ Լեռնային Ղարաբաղի դէմ յարձակման ժամանակ իսրայէլական արտադրութեան ինքնասպան-անօդաչու սարքերու կիրառման:

«Երուսաղէմի մէջ բարձրաստիճան պաշտօնեաներէն մէկը յայտարարած է, որ հայկական կողմը բողոք յայտնած է Իսրայէլի կողմէ Ատրպէյճանին զէնքի մատակարարումների առիթով, որը կիրառուած է հայկական բանակի դէմ»,- կը գրէ «Հաարեց» թերթը:

## Հանրահաւաք-Մոմավարութիւն Լոս Անճելըսի Քաղաքապետարանին Առջեւ



Տեսարան մը Լոս Անճելըսի քաղաքապետարանին առջեւ տեղի ունեցած հանրահաւաքէն

Երեքշաբթի, Ապրիլ 12-ի երեկոյեան, կազմակերպութեամբ համագաղութային մարմինի, հազարաւոր հայերու մասնակցութեամբ Լոս Անճելըսի քաղաքապետարանին շէնքին առջեւ տեղի ունեցաւ հանրահաւաք-մոմավարութիւն, ի յիշատակ արցախի դէմ ատրպէյճանական վերջին յարձակումի ընթացքին զոհուածներուն:

Այս առթիւ անգլերէնով ու հայերէնով ելոյթներ ունեցան քաղաքապետական խորհուրդի անդամներ եւ համագաղութային մարմինի ներկայացուցիչներ:

Բոլոր ելոյթ ունեցողները դատապարտեցին Ազերի նախայարձակ բանակի գործած ոճիրները ու իրենց զօրակցութիւնը յայտնեցին Արցախի հերոս ժողովուրդին:

## ԹԷ ՄԵՌՆԵՄ ԷԼ ՉԵ՞Մ ԱՓՍՈՍԱՐ ՀՈՂԴ ԳՐԿԱԾ ՓԱՌՔ Է ԻՆՁԻ

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութիւնը խոր ցաւով կը գուժէ իր ընկերներէն Կապանի շրջանի Ս.Դ.Հ.Կ. «Աղասի» մասնաճիւղի անդամ, փորձառու ազատամարտիկ, Սիսեանի կամաւորական ջոկատի անդամ,



ԳԱԳԻԿ ՓԱՐՍԱԴԱՆԵԱՆԻ

նահատակութիւնը Մարտակերտի պաշտպանութեան դիրքերուն վրայ:

ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութիւն

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Կարգաւորման Խուճապ

*ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ*

Արցախեան կարճատ՝ պատերազմից յետոյ ղարաբաղեան կարգաւորման գործընթացի շուրջ բորբոքուած վէրքերը չեն հանդարտւում։

Իրավիճակն իսկապէս անհասկանալի է, ու այդ իրավիճակում նաեւ խօսւում է հասարակութիւններին խաղաղութեան պատրաստելու անհրաժեշտութեան մասին։ Ընդ որում՝ դրա մասին տեւական ժամանակ խօսում էին նաեւ համանախագահ երկրները, միջնորդ տէրութիւններն ու միջնորդական յաւակնութիւններ ունեցող կառոյցները։ Իսկ ինչպէ՞ս պէտք է պատրաստուէին հասարակութիւնները խաղաղութեան, եթէ նրանք պատկերացում չունէին անգամ հանդիպումների, այցերի, հեռախօսազրոյցների ընթացքում ինչ դաւեր են նիւթւում իրենց ճակատագրի վերաբերեալ։ Ինչպէ՞ս խաղաղութեան պատրաստուէին, օրինակ, հայաստանցին կամ ղարաբաղցին, եթէ նա չգիտէր, թէ ինչպէս են պատրաստւում իր ճակատագիրը տնօրինել Հայաստանի, Ատրպէյճանի ղեկավարներն ու ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները։

Ակնյայտ է, որ կարգաւորման գործընթաց կոչուող ֆորմատը մտել է փակուղի, եւ փակուղի է մտել այն պատճառով, որ այս ամբողջ ընթացքում թէ՛ միջնորդները, թէ՛ հակամարտ կողմերի բանակցող իշխանութիւնները, հասարակութիւններին բանի տեղ չեն դրել, հարկ չեն համարել բացատրութիւններ տալ, իրավիճակ պարզաբանել, հարկ չեն համարել հասարակութիւնների հետ խորհրդակցել եւ հասարակական կարծիք ու պահանջարկ դնել իրենց բանակցային դիրքորոշումների հիմքում։ Ռուսաստանի եւ արեւումտքի միջեւ դիմակայութիւնից ի վեր ստեղծուել էր մի վիճակ, որ կարգաւորման գործընթաց կոչուածը պարզապէս կտրուել է իրականութիւնից եւ ներկայիս աշխոյժ եռուզեռը իրականում ոչ այնքան եռուզեռ է, որքան խուճապ, երբ բոլորը գիտակցել են իրականութիւնից կտրուած, օդ բարձրացած լինելն ու ահով յայտնաբերել, որ գետինը իրենցից շատ է հեռու եւ ով գիտէ, թէ ինչ կարող է տեղի ունենալ իրենց հետ վերեւում, նաեւ ներքեւում մնացածների հետ, եւ առաւել եւս իրենց հետ ներքեւում, ուր վաղ թէ ուշ ստիպուած են լինելու իջնել կամ ընկնել։

Տարիներ շարունակ բոլորին թէ՛ բանակցող կողմերին, թէ՛ միջնորդ համանախագահներին, թէ՛ տարատեսակ միջազգային կառոյցներին թւում էր, որ փակ ռեժիմով ընթացող բանակցութիւնների միջոցով իրենք տոտալ վերահսկողութիւն են սահմանել բոլոր մակարդակների վրայ եւ իրավիճակի թելերը պահում են իրենց ձեռքերում, ու ոչինչ չի կարող զարգանալ իրենց տեսադաշտից ու կամքից դուրս։ Բայց, ներկայումս կարծես թէ բոլորը կանգնել են փաստի առաջ, որ այդուհանդերձ ամէն ինչ չէ, որ կարողացել են բռի մէջ պահել, եւ ժամանակն արել է իրենը՝ ձեւաւորել է տարբեր սերունդներ, տարբեր հասարակութիւններ, հասարակութիւնների հոգեբանութիւնն է փոխել, մտածողութիւնը, որի մի զգալի մասն էլ պայմանաւորուել է երկրների ներսում առկայ դեգրադացիոն խայտառակ պրոցեսներով։ Իսկ Ղարաբաղի հարցը տարիներ շարունակ ծառայել է որպէս այդ պրոցեսների շղարշ, փական, այդ ամենի դէմ դժգոհութիւնները հանգստացնելու սառը ջուր։ Այժմ ահա այդ իրավիճակի լիակատար ձախողման, տապալման փաստի առաջ ենք կանգնում բոլորս, արձանագրելով, որ այս ընթացքում ձեւաւորուել են բազմաթիւ ներքին ու արտաքին նոր իրողութիւններ, որոնք անհնար է հաշուի չառնել Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործընթացի հանդէպ մօտեցումներ կառուցելիս, այդ մօտեցումները առաջ մղելիս։

Մինչեւ Ապրիլի մէկի լոյս երկուսը կարգաւորման գործընթացում ստեղծուել էր կարծես թէ երկակի վտանգաւոր վիճակ։ Մի կողմից, երբ հաշուի չէին առնւում նոր իրողութիւններն ու հանգամանքները, լարումը կարծես հասցնելով կրիտիկականի եւ գործընթացը վերջնականապէս մտցնելով փակուղի, միւս կողմից էլ, եթէ հաշուի էին առնւում, առաջանում էր մօտեցումների շրջադարձային վերանայման անհրաժեշտութիւն, ինչին պատրաստ չէին եւ չեն ակնյայտօրէն թէ՛ Հայաստանը, թէ՛ Ատրպէյճանը, քանի որ դա ենթադրում է նաեւ ներքին շատ լուրջ վերափոխումներ, ներպետական իրավիճակի տրանսֆորմացիա։ Աւելին՝ պատրաստ չէին եւ չեն թերեւս նաեւ համանախագահները, քանի որ նրանց միջեւ շարունակուող մրցակցութիւնը նրանց կեցուածքի մէջ միշտ էլ գերադրական աստիճանի վրայ է պահել գործընթացի հանդէպ դեստրուկտիւ տարրը, քան հակառակը։ Այլ հարց է, որ այդ դեստրուկտիւիզմը կարգաւորման այս կամ այն փուլում կողմերից մէկի համար կարող է լինել նպաստաւոր։

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

# Ղարաբաղի Դաժան Դասերը

*ՆԱՅԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ*

Ղարաբաղում հանգիստ է, եւ ամէն մէկը փորձում է յետ նայել ու տեսնել, թէ ինչը չի այնպէս արել եւ ինչ պէտք է անել, որ բարբարոսական մղձաւանջը չկրկնուի։

Ղարաբաղը մի քանի մահացու դաս է տուել, որոնք պէտք է իւրացնել կեանքի համար։

Հայաստանը չունի դաշնակիցներ, կայ մետրոպոլիա՝ Ռուսաստանը, որը գաղութացրել է Հայաստանը՝ զրկելով ինքնիշխանութիւնից, եւ հիմա փորձում է Ատրպէյճանը մտցնել իր թուրքական միութիւններում՝ նրան զոհաբերելով Ղարաբաղն ու ամբողջ Հայաստանը։

Հայաստանը չունի դիւանագիտութիւն։ Հայաստանի արտաքին քաղաքականութիւնն աշխատում է մետրոպոլիայի համար՝ չառաջադրելով սեփական շահերն ու զոհաբերելով սեփական ժողովրդին։

Հայաստանում չկան քաղաքական բնոյթի ղեկավարներ։ Մօտ մէկ տարի բոլորը թաքցրել են, որ Ռուսաստանը չի մատակարարում վարկով խոստացած բարձր ճշգրտութեան զէնքը։ Ապրիլի 7-ին այդ մասին ասել է Յովիկ Աբրահամեանը, որը Դմիտրի Մեդվեդեւին խնդրել է կատարել պայմանագրային պարտաւորութիւնը։ Սակայն Մեդվեդեւը Բաքու է գնացել եւ իր տեղակալի մակարդակով խոստացել զէնք մատակարարել Ատրպէյճանին։

Հայաստանի էլիտան չի գիտակցում իր պատասխանատուութեան աստիճանը։ Ռազմական ղեկավարութիւնը բացայայտ խոստովանում է, որ տեղեակ էր Ատրպէյճանի զօրաշարժերի մասին, սակայն դա «սովորական լոկալ գործողութիւն» է համարել։ Իսկ երկրի նախագահն ասում է, որ Հայաստանը կռւում է 80-ականների զէնքով, չնայած այն բանին, որ բարձր ճշգրտութեան զէնքի գնման պատրուակով Հայաստանը Ռուսաստանին է յանձնել երկրի ինքնիշխանութիւնը։ Այս խոստովանութիւնները նախատեսում են կոշտ պատասխանատուութիւն, եւ դա կը լինի։

Հայաստանը չունի էլիտա։ Ատրպէյճանի ագրեսիայից մէկ շաբաթ էլ չի անցել, սակայն խորհրդարանական երկու խմբակցութիւնների ղեկավարներ յայտարարել են, որ օտար խաղաղարարների մուտքը հակամարտութեան գօտի անխուսափելի է։

Հայաստանը չունի էլիտա։ Եթէ մինչեւ հիմա քաղաքական յանցագործները փորձել են ինդուլգենցիա գնել՝ կառուցելով մատուռներ ու խաչքարեր, հիմա գնում են Ղարաբաղ՝ նկարուելու խրամատների ֆոնին։

Հայաստանն ունի կարծես թէ աստուածային էներգիայով օժտուած ժողովուրդը, որը բացարձակ ռացիոնալ է գնահատում իրավիճակն ու միայն իր վրայ է յոյս դնում։ Այդ ժողովուրդը շատ շուտով կը փոխի արտաքին քաղաքականութիւնը, դիւանագիտութիւնը, անպատասխանատու ռազմաքաղաքական ղեկավարութիւնը։

«ԼՐԱԳԻՐ»






# Մենք եւ նրանք

*ԱՐՄԻՆԷ ՕՀԱՆԵԱՆ*

Այս օրերին մենք բոլորս միասին տարբեր հասկացութիւններ ու սկզբունքներ ենք իւրացնում-ուսումնասիրում։ Սովորում ենք հիանալ պատերազմի հերոսներով, բայց չհիանալ ու չքարոզել պատերազմ։ Աշխատում ենք արցունք թափել մեր հերոս նահատակների շիրիմներին, բայց նրանց կեանքից գրկած թշնամուն չուրախացնել մեր խեղճութեամբ-տխրութեամբ։ Փորձում ենք քննադատել մեր իշխանութիւններին՝ հետախուզութեան, բանակի, սպայակազմի, տեխնիկայի թերութիւնների-հնացածութեան առումով, բայց հակառակորդին վախեցնել մեր մարտական ոգով ու հայրենիքը պաշտպանելու միակամութեամբ, նրան հասկացնել, որ 80-ականների զէնքը մեզ չի խանգարի ետ շպրտել հակառակորդին ու ամրագրել Արցախի անկախ ապրելու իրաւունքը։ Մի կողմից աշխարհին ուղղուած մեր ակնկալիքներն ենք ցուցադրում՝ ղարաբաղեան խնդրի խաղաղ կարգաւորմանն աջակցութիւն սպասելով գերտէրութիւններից, Մինսկի խմբի համանախագահներից, միջազգային կառոյցներից։ Բայց եւ ուզում ենք ցուցադրել, որ մեր յոյսը մեզ վրայ է, եւ եթէ կրկին մեր «չերեփը» թղթից լինի, իսկ գերտէրութիւնների շահերը չհամընկնեն մեր երազանքների հետ, մենք այլեւս 18-րդ դարի խեղճուկրակ հայերը չենք եւ կը կարողանանք մեր հարցերը լուծել ինքնուրոյնաբար։ Մենք հասկանում ենք, որ տնտեսապէս շատ հզօր չենք, եւ մեր պետութիւնն ի վիճակի չէ այդքան զէնք գնել, որքան մեր հակառակորդը. ոչ նաւթահորեր ունենք, ոչ չկոռումպացուած իշխանութիւն, ոչ զէնք մատակարարող շռայլ դաշնակից, բայց մենք Սփիւռք ունենք եւ դժուար պահին իր վերջին լուման բանակին ու զինուորին ուղարկող հասարակութիւն, որին ընկճելն անհնարին է։ Եւ, վերջապէս, անգամ եթէ անչափ շատ ենք ուզում, որ այս տարածաշրջանում խաղաղութիւն հաստատուի, դա չի նշանակում, որ պատրաստ ենք անարժանապատիւ ապրել։

«ՀՐԱՊԱՐԱԿ»


ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆ

**MASSIS Weekly**

**Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**

1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**

**ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

## «Ընթանում է Լրատուական Պատերազմ, Որի Նպատակը Հայ-Ռուսական Յարաբերութիւններում Սեպ Խրելն է»




*Հայաստանի պաշտպանութեան նախկին նախարար Վաղարշակ Յարութիւնեան ելոյթ կ՚ունենայ ««Ազատութիւն» հեռատեսիլով*

Հայաստանի պաշտպանութեան նախկին նախարար Վաղարշակ Յարութիւնեանի գնահատմամբ, վերջին օրերին լրատուական պատերազմ է ընթանում, որի նպատակը հայ-ռուսական յարաբերութիւններում սեպ խրելն է:

Նախկին նախարարը հարց է հնչեցնում՝ Հայաստանի շահերի՞ց է արդեօք բխում, որ Ռուսաստանի փոխարէն այսօր Ատրպէյճանի վրայ աւելի ուժեղ ազդեցութիւն ձեռք բերեն այլ երկրներ, որոնք շահագրգռուած չեն տարածաշրջանում խաղաղութեան պահպանմամբ:

Վաղարշակ Յարութիւնեանը յիշեցնում է՝ հենց այդ իրավիճակն էլ կ՚առաջանար, եթէ 2010 թուականից յետոյ Ռուսաստանը ռազմատեխնիկական համագործակցութիւն չհաստատեր Ատրպէյճանի հետ եւ այդպիսով, նաեւ զէնքի վաճառքի միջոցով, տարածաշրջանում հաւասարակշռութիւն պահպանելու նպատակով չուժեղացներ իր ազդեցութիւնը: Չէ՞ որ, նախկին նախարարի յիշեցմամբ, մինչ այդ Ատրպէյճանը ոչ պակաս ծանր սպառազինութիւն էր ձեռք բերում Իսրայէլից, Թուրքիայից եւ Ուկրաինայից:

«Դա բիզնես չէ, դա ռազմատեխնիկական համագործակցութիւն է, որը հետապնդում է քաղաքական նպատակներ: Նոյնն են անում բոլոր զէնք վաճառող երկրները: Սա ռուսական երեւոյթ չէ, սա համաշխարհային երեւոյթ է»,- Աննա Իսրայէլեանի «Տեսակէտների խաչմերուկ» հաղորդաշարի ժամանակ յայտարարեց Հայաստանի պաշտպանութեան նախկին նախարար Վաղարշակ Յարութիւնեանը:

## «Նախագահին Ճիշտ Չեն Հասկացել, Հայաստանը Ժամանակակից Զենք Էլ Ունի»

Հայաստանն անելու է ամէն ինչ, որպէսզի բանակցութիւնների միջոցով հասնի Լեռնային Ղարաբաղի միջազգային ճանաչմանը: Իշխող Հանրապետականի գործադիր մարմնի նիստից յետոյ նման յայտարարութիւն արեց կուսակցութեան խօսնակ Էդուարդ Շարմազանովը:

Անդրադառնալով օրեր առաջ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի հետ Հայաստանի նախագահի հանդիպմանը, որի ընթացքում Սարգսեանը շեշտել էր, թէ շփման գծում ռազմական գործողութիւնների ակտիւացման ժամանակ հայկական կողմը 80-ականների զէնքով է կռուել, Շարմազանովը շեշտեց՝ նախագահի խօսքը Հայաստանում ճիշդ չեն հասկացել, նա ամենեւին նկատի չունի, որ մենք ժամանակակից զէնք չունենք:

Քննադատութիւններին, թէ Հայաստանն անցած տարիներին անարդիւնաւէտ ծախսեր է արել՝ ուշադրութիւն չդարձնելով բանակին, Շարմազանովը հակադարձեց՝ Հայաստանն անհարկի ծախսեր չի արել, իր ուշադրութեան կենտրոնում ունեցել է բանակի, անվտանգութեան համակարգի հզօրացումը, ու դրա շնորհիւ է, որ քառօրեայ ռազմական գործողութիւնների արդիւնքում Ատրպէյճանը չհասաւ իր նպատակին:

«Ունենք զէնք, բայց կիրառուել է 80-ականների դրանով բանակը կարողացել է դիմակայել Ատրպէյճանի նորագոյն զինատեսակներին: Ատրպէյճանի բանակը մի քանի անգամ աւելի շատ՝ միլիարդաւոր դոլարներ է ծախսել, եւ Հայաստանի իշխանութիւնները մէկ անգամ չէ, որ քննադատել են Ատրպէյճանի սպառազինութիւնների մրցավազքը: Բայց փաստն այն է, նախագահը շատ յստակ նշեց, որ յաղթում են ոչ միայն զինատեսակով, այլ, նախեւառաջ՝ ոգով: Հայաստանը անհարկի ծախսեր չի արել՝ ամէն ինչ արել է բանակի համար: Ատրպէյճանի բլից կրիգը տապալուել է, եւ մենք կարողացանք կանգնեցնել հակառակորդի առաջխաղացումը»,- ասաց ՀՀԿ խօսնակը:

Անդրադառնալով շփման գծում խաղաղապահներ տեղակայելու հարցին, իշխող Հանրապետականի ներկայացուցիչը վերահաստատեց նախագահ Սարգսեանի՝ աւելի վաղ արած այն յայտարարութիւնը, թէ՝ նախ պէտք է լինի հակամարտութեան համապարփակ լուծում. - «Եւ այդ համապարփակ լուծման մէջ դա ընդամէնը մէկ գործօնն է, մենք պէտք է վերացնենք պատճառները, ոչ թէ հետեւանքները»: Խնդիրներն առաջանում են նրանից, որ որոշ մարդիկ, որոշ պետութիւններ, առաջին հերթին՝ Ատրպէյճանը, խօսում են հետեւանքների վերացման մասին»:

www.massisweekly.com

## Քաղաքագէտները՝ Սարգսեան-Տէր-Պետրոսեան հանդիպման մասին

Պէտք են ճշգրիտ քաղաքական որոշումներ, որոնք հետագայում կանխորոշելու են դէպքերի հետագայ ընթացքը: Սա քաղաքագէտների գնահատականն է Սերժ Սարգսեան-Լեւոն Տէր-Պետրոսեան հանդիպմանը:

«Այդ հանդիպման տակ բան ման գալ՝ ես հակուած չեմ, որովհետեւ, չնայած բոլոր վարկածներն էլ գոյութեան իրաւունք ունեն, բայց յամենայն դէպս, ինքնին, որ նախկին նախագահն ու գործող նախագահը հանդիպում են՝ դա գալիս է ինչ-որ անհրաժեշտութիւնից: Կար այդ անհրաժեշտութիւնը, որ երկուստեք եկել են համաձայնութեան՝ մի կողմ դնելով բոլորին յայտնի տարաձայնութիւնները, որը եղել է մինչ այժմ»,- «Ա1+»-ի հետ զրոյցում նշեց քաղաքագէտ Ռուբէն Մեհրաբեանը:

Քաղաքագէտ Հրանդ Մելիք - Շահնազարեանն էլ իր հերթին յաւելում է.

«Սա դրական երեւոյթ է: Քաղաքական քննարկման գործընթացների տեսակէտից բաւականին շահեկան է եւ, ընդհանրապէս, արտայայտում է այն միասնականութեան մթնոլորտը, որը այսօր ստեղծուել է հայ հասարակութեան շրջանում՝ կապուած արտաքին սպառնալիքի հետ»:

Լեւոն Տէր-Պետրոսեանն այսօր բացել է փակագծերը՝ ասելով՝ Հայաստանին եւ Ղարաբաղին սպառնացող վտանգին պահերին, անկախ իշխանութիւնների հետ ունեցած լուրջ հակասութիւններից, ինքը միշտ էլ հանդէս է եկել նմանատիպ նախաձեռնութիւններով:

Լեւոն Տէր-Պետրոսեանը միաժամանակ նաեւ շեշտել է, որ բանակցութիւնների սեղանին Մադրիդեան փաստաթուղթն է, որը պարունակում է թէ տարածքների վերադարձմանը եւ թէ խաղաղապահ ուժերի տեղակայմանը վերաբերող յօդուածներ:

«Հիմա ձեռնարկուել է նոր եւ շատ ակտիւ փուլ բանակցային գործընթացի եւ այս պահին հայկական դիւանագիտութիւնը ԼՂՀ ճանաչման սպառնալիքը պէտք է պահի ուժի մէջ, պէտք է դրա մասին բարձրաձայնի: Սակայն, կարծում եմ, որ հայկական դիւանագիտութեան թիւ մէկ խնդիրը ճանաչումը չէ, այլ թիւ մէկ խնդիրն է ԼՂՀ-ն վերադարձնել բանակցային ֆորմատ, այն ինչ-որ Ռոբերդ Քոչարեանի յանցաւոր որոշմամբ կամ գործարքի արդիւնքում դուրս բերուեց»-ընդգծում է Ռուբէն Մեհրաբեանը:

Հրանդ Մելիք-Շահնազարեանն էլ ասաց. «Կար բանակցային գործընթաց, որը փոխզիջումային տրամաբանութեան մէջ էր ընթանում: Հիմա՝ ըստ էութեան հայկական կողմը շարունակում է մնալ այդ տրամաբանութեան մէջ, բայց նաեւ յայտարարում է, որ այդպէս վարուելու ռեսուրսը սպառուել է եւ փաստացի վերջին նախազգուշացումն է տալիս ինչպէս Ատրպէյճանին, այնպէս էլ միջնորդներին»:

## Իշխանութիւնը Պատրաստ Է Ընդդիմութեան Տրամադրել Քուէարկածներու Ոչ Պաշտօնական Ցուցակները

Տեղամասային ընտրական յանձնաժողովները կարող են վստահուած անձանց տալ քուէարկածների ցուցակները, սակայն միայն ոչ պաշտօնական: Այս մասին Ապրիլի 9-ին՝ խորհրդարանում ԸՕ նախագծի շուրջ 4+ 4+ 4 ձեւաչափով քննարկումների ժամանակ, ասել է Կառավարութեան աշխատակազմի ղեկավար Դաւիթ Յարութիւնեանը:

Այլ խօսքով ասած՝ ցուցակները կը տրուեն սովորական թղթի վրայ, առանց ստորագրութեան եւ կնիքի ու չեն համարուի պաշտօնական փաստաթուղթ: Այդ ցուցակներում կը նշուեն միայն ցուցակում քուէարկածների համարները: Այդ կերպ իշխանութիւնը չի խախտի իր դիրքորոշումը եւ պաշտօնապէս չի հրապարակի ընտրացուցակները:

Իսկ այս ոչ պաշտօնական ցուցակներում կը լինեն ոչ թէ անուններն ու ազգանունները, այլ ընտրական ցուցակներում քուէարկածների համարները: Այդ դէպքում վստահուած անձինք կարող են դրանք համեմատել ընդհանուր ցուցակներում անուն ազգանունների հետ ու ստուգել անհամապատասխանութիւնները:

Հաշուարկի գիշերը ցուցակները չեն տրամադրուի, քանի որ առաջին օրը էլեկտրոնային սարքը կարող է աշխատել միայն պաշտօնական թղթի վրայ:

Եթէ դրանց միացուի տպիչ սովորական թղթով, ապա տուեալները կարող են փոխանցել այդ թղթի վրայ: Իսկ եթէ ընդդիմութիւնը պատրաստ չէ հանրապետութեան 2 հազար տեղամասերից իւրաքանչիւրում տպիչ տեղադրել, ապա ստիպուած է սպասել յաջորդ օրուան, պարզաբանեց Յարութիւնեանը:

## Արկադի Տէր-Թադեւոսեանը Աշխարհի Բոլոր Հայ Զինուորականներին Կոչ Է Արել

Գեներալ-մայոր Արկադի Տէր-Թադեւոսեանը աշխարհի բոլոր երկրներում բնակուող հայազգի բարձրաստիճան սպաներին եւ ռազմական փորձագէտներին կոչ է արել միանալ իր առաջարկած ծրագրին, ըստ որի նախատեսւում է ռազմական-ուսումնական կենտրոններում համապատասխան գիտելիքներ փոխանցել, բոլոր նրանց, ովքեր ցանկանում են զինուորագրուել հայոց բանակին:

Նրա խօսքով՝ ծրագիրը մշակուել է հաշուի առնելով ատրպէյճանական ապրիլեան հերթական ագրեսիայի ընթացքում սկիզբ առած ինքնաբուխ կամաւորական շարժումը, որը տուեալ պահն հակառակորդին դիմագրաւելու գործում իր ուրոյն դերակատարութիւնն ունեցաւ:

Ըստ Ա. Տէր-Թադեւոսեանի անհրաժեշտութիւն է զգացւում որոշակիօրէն կազմակերպուած բնոյթ հաղորդել համաժողովրդական կամաւորական շարժմանը:

**ԼՈՒՐԵՐ**

## Դէ Վաալ. «Նախայարձակ Կողմի՝ Ատրպէյճանի Նուաճումները Լուրջ Չեն



փորձագէտ Թոմաս Դէ Վաալ

Վերլուծաբանները փորձում են ամփոփել քառօրեայ պատերազմի արդիւնքները: Քարնեգի հիմնադրամի փորձագէտ, Լեռնային Ղարաբաղի մասին բազում աշխատութիւնների հեղինակ Թոմաս դե Վաալը «Ազատութեան» թղթակից Վադիմ Դուբնովի հետ զրոյցում ասել է, որ «Նախայարձակ կողմը՝ Ատրպէյճանն, իհարկէ, լուրջ նուաճումներ չի ապահովել, քանի որ գրաւել է որոշ բարձունքներ եւ հողակտորներ, սակայն դա շատ քիչ է հայերի հսկողութեան ներքոյ գտնուող տարածքների համեմատութեամբ»:

«Շարունակել գործողութիւնը՝ կը նշանակէր կրել է՛լ աւելի մեծ կորուստներ նուազագոյն ձեռքբերումների դիմաց», - ասել է բրիտանացի փորձագէտը եւ աւելացրել. - «Ատրպէյճանական հողերն արդէն երկու տասնամեակ ուրիշի հսկողութեան տակ են, դա մեծ տրամա է, միւս կողմից՝ այդ տարածքներն ուժով գրաւելու փորձերը կը նշանակեն մարդկային հսկայական կորուստներ, Ատրպէյճանն այս խնդրի աղեկվատ պատասխան չի գտնում»:

Արձագանքելով «Ազատութեան» հարցին, թէ «արդեօ՞ք սա վճռական գրոհն էր, որի մասին խօսել են Ատրպէյճանի նախագահը եւ Մոսկուայում Ատրպէյճանի դեսպանը, թէ՞ հանգամանքների զուգադիպում, որը յետոյ օգտագործուել է բախումներ սկսելու համար», Թոմաս Դէ Վաալն ասել է, որ ստոյգ պատասխան չկայ, քանի որ տեղում քիչ են դիտորդները:

Անցած երկու տարում շփման գծում եղել են շատ բախումներ: Գարնանն էլ դրանք աւելի յաճախ են պատահում, որովհետեւ սարերում աւելի դիւրին է մարտեր վարել:

«Բայց աւելի բարդ գործողութիւններ իրականացնելու եւ դրանց ընթացքում ծանր զինատեսակներ կիրառելու համար անհրաժեշտ է Երեւանում կամ Բաքւում նախագահի քաղաքական կամքը, նման որոշումներ պարզ հրամանատարները չեն ընդունում»,- ասել է Թոմաս դե Վաալը:

Խօսելով միջազգային իրավիճակի մասին, փորձագէտն ասել է, որ Կովկասն, իհարկէ, միջազգային ազդեցութիւնների տարածաշրջան է, եւ Ռուսաստանն այստեղ նշանակալից դեր է խաղում, բայց նրանք, ովքեր ակնարկում են «Մոսկուայի ձեռքի» մասին, հաշուի չեն առնում, որ ի տարբերութիւն Աբխազիայի, Հարաւային Օսիայի եւ Մերձդնեստրի՝ Ռուսաստանն այստեղ խաղաղապահներ չունի:

«Ես չեմ տեսնում Ռուսաստանի ձեռքն այստեղ»,- ասել է Թոմաս Դէ Վաալը:

Նրա համոզմամբ, Ատրպէյճանը հիմա չունի հարցը ռազմական տարբերակով լուծելու հնարաւորութիւն:

«Կարելի է, իհարկէ, ինչ-ինչ կորցրած տարածքներ գրաւել, բայց աւելի լայնածաւալ պատերազմի համար անհրաժեշտ է ոչ միայն աւելի մեծ ռազմական հզօրութիւն, այլեւ դրան նպաստող արտաքին քաղաքական համատեքստ, որը հիմա չի նկատւում: Ռուսաստանը, Թուրքիան, Արեւմուտքը չեն ուզում նոր կոնֆլիկտ Ղարաբաղի շուրջ»,- ասել է Թոմաս Դէ Վաալը:

## Պանամայի Փաստաթղթերում Յիշատակուած է Միհրան Պօղոսեանի Անունը



ԴԱՀԿ ծառայութեան պետ Միհրան Պօղոսեան

Թրանսփարենսի ինթերնեշընլ հակակոռուպցիոն կենտրոնը պատրաստւում է դիմել Բարձրաստիճան պաշտօնատար անձանց էթիկայի յանձնաժողով՝ ուսումնասիրելու «Հետք» էլեկտրոնային պարբերականի հրապարակումը, թէ գլխաւոր հարկադիր կատարող Միհրան Պօղոսեանը օֆշորային ընկերութիւնների միջոցով «բիզնես է անում, իր պաշտօնն օգտագործում սեփական բիզնեսի զարգացման համար՝ թաքցնելով եկամուտները»:

«Օրէնքով յանձնաժողովը կարող է վարոյթ յարուցել նաեւ սեփական նախաձեռնութեամբ», - «Ազատութեան» հետ զրոյցում պնդեց կենտրոնի փորձագէտ Հերիքնազ Տիգրանեանը: - «Եթէ էթիկային յանձնաժողովին խանգարող միակ հանգամանքը դիմումի բացակայութիւնն է, ցանկացած մէկը, կարող է լինի մեր կազմակերպութիւնը, պատրաստ է այդ դիմումը ներկայացնելու, որպէսզի այդ գործը առանց քննութեան չմնայ»:

«Հետք»-ը գրել էր, որ մի քանի օր առաջ զաղտնազերծուած օֆշորային ընկերութիւնների միլիոնաւոր փաստաթղթերում կան նաեւ հայաստանցիների՝ ԴԱՀԿ ծառայութեան պետ Միհրան Պօղոսեանի եւ նրա բարեկամների անունները:

Միհրան Պօղոսեանը, ըստ հետաքննող լրագրողների, Պանամայում գրանցուած երեք ընկերութիւնների բաժնետէր է, շուեյցարական բանկերից մէկում դրանցից երկուսի հաշուեհամարների կառավարման իրաւասու միակ անձը: Այդ ընկերութիւններն են տնօրինում նաեւ Հայաստանում գրանցուած «Բեսթ Ռեալթի» ընկերութիւնը, որը ԴԱՀԿ ծառայութեան վարոյթի շրջանակներում Կարէն Դեմիրճեանի անուան մարզահամերգային համալիրը գնահատել էր 25,8 մլրդ դրամ:

## Սպաննուած Ատրպէյճանցի Զինծառայողների Թիւը Հասել է 93-ի

Ղարաբաղա-ատրպէյճանական շփման գծում տեղի ունեցած մարտական գործողութիւնների հետեւանքով սպաննուած ատրպէյճանցի զինծառայողների թիւը հասել է 93-ի: Այս մասին հաղորդում է «Արմենպրես»-ը՝ յղում կատարելով «Ռազմական հետազօտութիւնների կասպեան ինստիտուտ»-ին:

Համաձայն «Ռազմական հետազօտութիւնների կասպեան ինստիտուտ»-ի իրականացրած մոնիթորինգի, որի հիմք են հանդիսացել սոցցանցերում տեղ գտած նիւթերը, Ապրիլի 1-6-ն ընկած ժամանակահատուածում շփման գծում սպաննուել է Ատրպէյճանի 93 զինծառայող:

«Յայտնի են նաեւ 34 վիրաւորի անունները»,-ասուած է Ռազմական հետազօտութիւնների կասպեան ինստիտուտի հաղորդագրութեան մէջ:

## Սահմանին Վրայ Կը Տիրէ Յարաբերական Անդորր

Շարունակուածէջ 1-էն

### ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ-ԼԵՒՈՆ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ապրիլ 9-ին, անակնկալօրէն յայտարարուեցաւ որ Նախագահ Սերժ Սարգսեան հանդիպում ունեցած է ՀՀ առաջին Նախագահ Լեւոն Տէր- Պետրոսեանի հետ:

Հանդիպելու նախաձեռնութիւնը եղած եկած է Լեւոն Տէր-Պետրոսեանէն: Շուրջ մէկ ժամ տեւած զրոյցը բացառապէս վերաբերած է Ղարաբաղա-ատրպէյճանական սահմանին վրայ տեղի ունեցած վերջին իրադարձութիւններին, Ղարաբաղեան կարգաւորման բանակցային գործընթացէն ներս սպասուող յառաջիկայ զարգացումներուն եւ այդ մարտահրաւէրներուն հանդէպ ներազգային համախմբման անհրաժեշտութեան:

Հանդիպումը տեղի ունեցած է Լեւոն Տէր-Պետրոսեանի բնակարանը:

### ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԱՅՑԸ ԳԵՐՄԱՆԻԱ

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեան պաշտօնական այցելութիւն կատարեց Գերմանիա եւ վարչապետ Անկելա Մըրքըլի հետ տեսակցութենէն ետք տրուած մամլոյ միատեղ ասուլիսի ընթացքին անդրադարձաւ Ռուսաստանի կողմէ Ատրպէյճանին վաճառուող զէնքերու հարցին:

«Ռուսիան մեր ռազմավարական դաշնակիցն է, մենք Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան անդամ երկիր ենք եւ մեզի համար ցաւալի է, որ Ռուսիան եւ այդ կազմակերպութեան միւս անդամները զէնք կը վաճառեն Ատրպէյճանին: Ատրպէյճան ժամանակակից զէնք ունի եւ եռօրեայ ռազմական գործողութիւնները ցոյց տուին, որ ան գանոնք կը գործածէ: Սակայն ուժը զէնքի արդիականութեան եւ հրասայլերու մէջ չէ, այլ այն հաւատքին, որ ունի Ղարաբաղի եւ ընդհանրապէս Հայ ժողովուրդը: Հաւատքը առ այն, որ պէտք է հայրենիքը պաշտպանել: Այո, մենք կը կռուինք հիմնականին մէջ 1980-ական թուականներու զէնքով, սակայն մենք կը տեսնենք, թէ ինչ կորուստներ ունի ատրպէյճանական կողմը», ըսաւ Սերժ Սարգսեան:

### ՄԵՏՎԵՏԵՒԻ ԱՅՑԸ ԵՐԵՒԱՆ ԵՒ ՊԱՔՈՒ

Գերմանիայէն վերադարձին Սերժ Սարգսեան Երեւանի մէջ ընդունեց Ռուսաստանի վարչապետ Տմիթրի Մետվետեւին: Տեսակցութեան ընթացքին նախագահը իր հիւրին տեղեկացուց, որ Արցախի բախումներուն ընթացքին ատրպէյճանցիները գործածած են Ռուսիայէն գնած բոլոր արդիական զէնքերը: «Ցաւալի է, որ այդ զէնքերը գործածուեցան նաեւ խաղաղ բնակչութեան, երեխաներու եւ տարեցներու դէմ: Սակայն շնորհիւ հայկական բանակի եւ հրամանատարներու արհեստավարժ գործողութիւններուն, ատրպէյճանցիներուն յարձակումը զսպուեցաւ: Հայաստանի մէջ ժողովրդական մակարդակով Ռուսիոյ կը համարեն որպէս մերձաւոր դաշնակից եւ բարեկամ: Այսօր ստեղծուած է այնպիսի վիճակ մը, որ մենք չենք կրնար բացառել որեւէ նոր սադրանք», ըսած նախագահը:

Երեւանէն ետք Ռուսաստանի վարչապետը անցաւ Պաքու, ուր յայտարարեց որ, Մոսկուայի համար Հայաստանի եւ Ատրպէյճանի հետ դրական յարաբերութիւններ ունենալը նոյնքան կարեւոր է: Պաքուի մէջ Ատրպէյճանի Նախագահ Իլհամ Ալիեւի հետ տեսակցելէ ետք վարչապետը յայտարարեց, որ Մոսկուա Պաքուի հետ ունի շատ նախագիծեր՝ տնտեսական, մարդասիրական, քաղաքական եւ այլ ոլորտներու մէջ:

### ԱՐՑԱԽ ՊԻՏԻ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ ԲԱՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՍԵՂԱՆ»

ԵԱՀԿի Մինսքի խումբի Ամերիկացի, ֆրանսացի եւ ռուս համանախագահները այցելեցին Երեւան եւ Ստեփանակերտ: Հայաստանի եւ Արցախի նախագահներուն հետ իրենց ունեցած հանդիպումներէն ետք համանախագահները մամլոյ ասուլիս մը տալով ամփոփեցին իրենց հանդիպումներու արդիւնքները: Անոնք պնդեցին, որ իրենց գործը չէ ճշդել, թէ ով պատասխանատու է կրակոցներուն: «Մեր հիմնական խնդիրն է՝ օգնել կողմերուն կայունացնել վիճակը, նաեւ կանխարգիլել ռազմական գործողութիւններու վերսկսումը: Մեր հանդիպումներու ընդհանուր եզրակացութիւնը այն էր, որ կողմերը մտադիր են, կամ առնուազն պատրաստակամութիւն ունին պահպանելու Մոսկուայի մէջ ձեռք բերուած զինադադարը», ըսին համանախագահները: Անոնք հաստատեցին, որ ղարաբաղեան իշխանութիւնները պիտի վերադառնան խաղաղութեան բանակցութիւններու սեղանի մօտ:

Երեւանի մէջ Մինսկի Խումբի համանախագահները դիմաւորուեցան բողոքի ցոյցերով, որոնց ընթացքին հնչեցին «Ճանա չում», «Ղարաբաղը մերն է», «Ալիեւ մարդասպան», «Ղարաբաղը անկախ է», «Մենք ենք Արցախը» վանկարկումները:

# Լեւոն Տէր-Պետրոսեանի Հարցազրոյցը Սերժ Սարգսեանի Հետ Հանդիպումէն Ետք

*ՀՀ առաջին նախագահ, ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը հարցազրոյց է տուել iLur.am կայքին, որտեղ, ի թիւս այլոց, անդրադառնում է ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի հետ իր հանդիպմանը:*

Պարոն նախագահ, առանց չափազանցութեան, Ձեր նախաձեռնութեամբ Սերժ Սարգսեանի հետ կայացած հանդիպումը սենսացիոն անակնկալ էր բոլորի համար: Ինչո՞վ դա կը բացատրէք:

*Իմ գործունէութեանը հետեւած մարդկանց համար դա բոլորովին անակնկալ չպէտք է լինէր, որովհետեւ Հայաստանին ու Ղարաբաղին սպառնացող վտանգի պահերին, անկախ իշխանութիւնների հետ ունեցած լուրջ հակասութիւններից, ես միշտ էլ հանդէս եմ եկել նմանատիպ նախաձեռնութիւններով: Յիշէք 1999թ. Հոկտեմբերի 28-ի իմ յայտարարութիւնը, «Ցեղասպանութեան 100-ամեակի հուշակագրին» նուիրուած հրապարակային առաջարկս, եւ վերջապէս, Հայ Ազգային Գոնկրէսի ս.թ. Ապրիլի 2-ի՝ իմ հաւանութեամբ ընդունուած յայտարարութիւնը:*

Իսկ ինչպէ՞ս Սերժ Սարգսեանին փոխանցեցիք հանդիպման առաջարկը՝ միջնորդի միջոցով, թէ՞ անմիջականօրէն: Գուցէ սա մանրուք թուա, բայց ամէն դէպքում հետաքրքիր է հասարակութեան համար:

*Այս հարցում ոչ մի խորհրդաւորութիւն չպէտք է փնտռել: Քանի որ ես բաց, ոչ գուլիսային քաղաքականութեան կողմնակից եմ, հասարակութիւնից թաքցնելու բան չունեմ: Ապրիլի 5-ին ես Սերժ Սարգսեանին ուղարկեցի հետեւեալ ձեռագիր նամակը. «Սերժ, չէ՞ս կարծում, որ ստեղծուած իրավիճակում մեր հանդիպումը, լաւատեսական լիցք հաղորդելով հասարակութեանը, դրական կ՚ընկալուի թէ՛ հայ ժողովրդի, թէ՛ միջազգային հանրութեան կողմից: Խօսակցութիւնը, բնականաբար վերաբերելու է իրավիճակից պատուով ու առանց քաղաքական կորուստների դուրս գալու խնդրին, ինչպէս նաեւ ՀՀ-ի կողմից ԼՂՀ-ի ճանաչման եւ Հայաստանի ու Ղարաբաղի միջեւ ռազմական փոխօգնութեան պայմանագրի կնքման շրջանառուող գաղափարների նպատակայարմարութեանը: Որպէս պրոպագանդիստական հնարքներ այդ գաղափարները, թերեւս, իմաստ ունեն, բայց դրանց իրականացումը, կարծում եմ, պէտք է լինի ոչ թէ պահի թելադրանքով պայմանաւորուած իմպուլսիւ արձագանք, այլ լրջագոյն խորհրդապահական քննարկման ու ճշգրիտ հաշուարկի հետեւանք: Հանդիպման վայրի ու ժամի ընտրութիւնը մնում է քո հայեցողութիւն: Հանդիպման փաստի հրապարակման մէջ ազատ ես նշելու, որ այն տեղի է ունեցել իմ նախաձեռնութեամբ: Տեսանիւթի կամ լուսանկարի կարիք չկայ, քանի որ, գիտես, ցուցադրական բաներ չեմ սիրում»:*

*Քանի որ յաջորդ օրերին Սերժ Սարգսեանը լինելու էր Գերմանիայում, նա ինձ հեռախօսով պատասխանեց, որ կը հանդիպենք վերադառնալուց յետոյ իմ տանը, ինչը եւ տեղի ունեցաւ:*

Այնուամենայնիւ Հայաստանի իշխանութիւնների եւ մասնաւորապէս Սերժ Սարգսեանի հետ Ձեր ունեցած չափազանց բարդ յարաբերութիւնների, փոխադարձ խիստ մեղադրանքների առկայութեան պարագայում անհնար էր պատկերացնել, որ մեր իրականութեան մէջ այդպիսի քաղաքակիրթ հանդիպում կարող է կայանալ, ինչը պատիւ է բերում թէ՛ Ձեզ, թէ՛ Սերժ Սարգսեանին:

*Նախ՝ քաղաքական վարվեցողութեան ասպարէզում ոչինչ անհնար չէ, եւ երկրորդ՝ ինչն անհնար է թւում մեր իրականութեան մէջ, ամենեւին անհնար չէ նորմալ, կայացած պետութիւններում: Արտաքին վտանգի առաջացման դէպքերում այդպիսի երկրներում սովորաբար, կամ որպէս կանոն, ներքին հակասութիւնները ժամանակաւորապէս մի կողմ են դրւում եւ բոլոր առողջ քաղաքական ու հասարակական ուժերի ջանքերն ուղղւում են ազգային միասնութեան կայացմանն ու վտանգի համատեղ դիմակայմանը: Եթէ մեզ մօտ դեռ, ցաւոք, այդպէս չէ, ապա դա բացատրւում է այն պարզ հանգամանքով, որ լինելով ընդամէնը 25 տարուայ անկախութեամբ օժտուած պետութիւն, մեզ մօտ առայժմ բացակայում են պետական մտածողութեան անհրաժեշտ աւանդոյթները: Թէեւ այս առումով բաւականին յուսադրող պէտք է համարել ղարաբաղա-ատրպէյճանական վերջին ռազմական դիմակայութեան օրերին Հայաստանի քաղաքական ուժերի, հասարակական խաւերի եւ ազատամարտիկների ինքնաբուխ համախմբման օրինակելի դրսեւորումը:*

Դատելով էլեկտրոնային մամուլի եւ ֆեյսբուքեան արձագանգներից, հասարակութիւնն իսկապէս նկատելիօրէն յուսադրուել ու դրական է գնահատել Ձեր եւ Սերժ Սարգսեանի հանդիպումը, բայց կան նաեւ, մեղմ ասած, կասկածամիտներ ու չարակամներ, ովքեր ուզում են ստուեր նետել այդ փաստի վրայ:

*Դաւադրութեան տեսութեան կողմնակիցներ ու ամէն ինչի ետեւում խարդաւանքներ որոնողներ միշտ էլ եղել են ու կլինեն: Բայց սովորաբար այդպիսի մարդիկ քաղաքական գործընթացների վրայ որեւէ ազդեցութիւն չեն գործում, ուստի անիմաստ է նրանց ասածներին ուշադրութիւն դարձնել: Կարեւորը հասարակութեան մեծամասնութեան կարծիքն է:*

Շատերի ընկալմամբ՝ Ղարաբաղեան կարգաւորման գործընթացի վերաբերեալ տարիներ առաջ Ձեր կատարած կանխատեսումներն իրականանում են: Դուք ի՞նչ կարծիքի եք դրա մասին:

*Կանխատեսութիւն ասուածի մէջ մոգական բան չպէտք է փնտռել. դրանք ընդամէնը եղել են գնահատականներ, բխած քաղաքական գործընթացների զարգացման միտումների իմ ըմբռնումից: Եթէ ոմանց թւում է, թէ ես պէտք է բաւարարուած լինեմ իմ «կանխատեսումների» իրականացման փաստից, ապա այդ մարդիկ մոլորւում են: Ես շատ աւելի ուրախ կը զգայի, որ սխալուած լինէի ու դրանք չիրականանային: «Բա որ ասում էի» տիպի «խորիմաստ» մտքերն ինձ համար անպտուղ տափակաբանութիւններ են: Որ ասում էիր, քեզ ժամանակին պիտի լսէին: Հիմա այդ ասածներդ որեւէ արժէք չունեն: Ո՞ւմ է պէտք յետին խելքը:*

Պարոն նախագահ, Ձեր կարծիքով, ի՞նչ նպատակ էր հետապնդում Ատրպէյճանի սանձազերծած վերջին արիւնալի ռազմական արկածախնդրութիւնը:

*Ղարաբաղա-ատրպէյճանական լայնածաւալ սահմանային բախումն ինձ յիշեցնում է 1973թ. արաբաիսրայէլեան, այսպէս կոչուած, «Եոմ Կիպուրի» պատերազմի սցենարը: Քանի որ, վստահաբար, շատերը ծանօթ չեն այդ սցենարին, ըստ երեւոյթին, հարկ կայ մի քանի բառով բացատրել նրա էութիւնը: Պատերազմը, Իսրայէլի համար լիովին անակնկալ, սկսուեց Եգիպտոսի եւ Սիրիայի հուժկու նախայարձակմամբ: Ու թէեւ ի վերջոյ այն աւարտուեց արաբական կողմի պարտութեամբ, սակայն ռազմական գործողութիւնների ծաւալման սկզբնական շրջանում ձեռքբերած լուրջ յաջողութեան շնորհիւ Եգիպտոսի ղեկավարութիւնը, նախագահ Անուար Սադաթի գլխաւորութեամբ փրկեց իր դէմքը, եւ դա յաղթաթղթի վերածելով, 1979 թուականին Քեմպ-Դեվիդում, համարձակօրէն հաշտութիւն կնքեց ու դիւանագիտական յարաբերութիւններ հաստատեց Իսրայէլի հետ, արդիւնքում ետ ստանալով նաեւ Սինայի թերակղզին: Նոյն կերպ, ուրեմն, Ալիեւը, թէեւ մեծ զոհերի գնով, անակնկալ գործողութեան շնորհիւ հայկական կողմին զգալի մարդկային կորուստներ պատճառելու եւ մի քանի դիրքեր գրաւելու փաստի սիմվոլիկ «յաղթաթղթով» փորձելու է շահել սեփական ժողովրդի համակրանքը եւ ուժեղացնել իր դիրքերը Ղարաբաղեան կարգաւորման առաջիկայ բանակցութիւններում:*

Իսկ ի՞նչ էք կարծում, հնարաւո՞ր է, որ զինադադարի լուրջ խախտումները կրկնուեն:

*Քանի որ հրադադարը կնքուեց Ռուսաստանի միջամտութեամբ, դա նշանակում է, որ, մանր-մունր փոխհրաձգութիւնները չբացառուած, Ռուսաստանն ի վիճակի է թոյլ չտալ զինադադարի լայնածաւալ խախտումները: Որպէս հետեւանք, այս հանգամանքը, բնականաբար, մեծացնում է Ռուսաստանի դերը Ղարաբաղեան կարգաւորման առաջիկայ բանակցութիւններում:*

Եթէ գաղտնիք չէ, կարո՞ղ էք ասել, թէ ինչ փաստաթուղթ է դրուելու բանակցութիւնների սեղանին եւ արդեօք այն պարունակելո՞ւ է որոշ տարածքների վերադարձմանը եւ խաղաղապահ ուժերի տեղակայմանը վերաբերող դրոյթներ:

*Այդ հարցը ցոյց է տալիս, թէ ինչպիսի շփոթ են ստեղծել մեր յարգելի վերլուծաբաններն ու քաղաքագէտները: Քննարկուելիք փաստաթուղթը վաղուց յայտնի է եւ կոչւում է Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման Մադրիդեան սկզբունքների հիման վրայ մշակուած եւ կողմերի միջեւ մեծ մասամբ համաձայնեցուած ծրագիր, որը պարունակում է թէ՛ տարածքների վերադարձմանը, թէ՛ խաղաղապահ ուժերի տեղակայմանը վերաբերող յօդուածներ: Մադրիդեան սկզբունքներն ու նրանց հիման վրայ մշակուած համապարփակ ծրագիրը բազմիցս հաստատուել են Մինսկի խմբի համանախագահող երկրների նախագահների համատեղ յայտարարութիւններով, արժանացել են Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահների սկզբունքային համաձայնութեանը: Մադրիդեան սկզբունքները որդեգրել է Ռոբերդ Քոչարեանը, եւ նրան այդ հարցում անվերապահօրէն սատարել են նրա վարչախմբի մաս կազմող կուսակցութիւնները: Քոչարեանն է Ղարաբաղին զրկել հակամարտութեան իրաւահաւասար կողմի միջազգայնօրէն ճանաչուած կարգավիճակից: Ի դէպ, նա է ընդառաջել նաեւ Ցեղասպանութեան փաստի ուսումնասիրութեան նպատակով հայ եւ թուրք պատմաբանների յանձնաժողովի ստեղծման թուրքական առաջարկին: Սերժ Սարգսեանն, ըստ այդմ, այս ամէնը ժառանգել է Քոչարեանից, եւ նրա պատասխանատուութեան չափը թուարկուած հարցերում աւելին չէ, քան վերջինիս վարչախմբի մասը հանդիսացած միւս դերակատարներինը: Ես գնահատականներ չեմ տալիս, այլ ընդամէնն արձանագրում եմ առկայ անժխտելի իրողութիւնները:*

Շնորհակալութիւն այս հանգամանալից պարզաբանումների համար, իսկ այժմ մի վերջին հարց. ի՞նչ դիրք պէտք է որդեգրի հայկական կողմը սպասուող բանակցութիւններում, եւ ի՞նչ պարտաւորութիւններ պէտք է ստանձնեն ընդդիմադիր քաղաքական ուժերն ու հասարակութիւնը տուեալ խնդրում:

*Հայկական կողմը, բնականաբար, կոշտ, բայց կառուցողական մօտեցումով բանակցութիւնների արդիւնքում պէտք է ձգտի ձեռքբերել հնարաւոր առաւելագոյնը: Իսկ ինչ վերաբերում է ընդդիմադիր ուժերի եւ հասարակութեան դերակատարութեանը, ապա դա պէտք է լինի ներքին տարաձայնութիւնները ժամանակաւորապէս սառեցնելուց եւ ազգային համախմբուածութիւնից բացի, ոչինչ աւելի: Հիմա սխալների ու բացթողումների համար իշխանութիւններին մեղադրելու եւ նրանցից հաշիւ պահանջելու ժամանակը չէ: Պատերազմը շուտով ռազմի դաշտից տեղափոխուելու է դիւանագիտութեան կամ դժուարագոյն բանակցութիւնների ճակատ: Պաշտօնի բերումով այդ պատերազմի հրամանատարները մեր կողմից լինելու են Սերժ Սարգսեանն ու Բակօ Սահակեանը: Եթէ անգամ Սահակեանն անմիջականօրէն չմասնակցի բանակցութիւններին, Սերժ Սարգսեանը ոչ մի պարագայում չի կարող հաշուի չառնել նրա կարծիքը (ի դէպ, ես պայմանաւորուածութիւն ունեմ հանդիպելու նաեւ վերջինիս հետ): Բանակցութիւնների սեղանի շուրջ Սերժ Սարգսեանը պէտք է իրեն ուժեղ զգայ, ունենալով իր ժողովրդի աջակցութիւնը: Բայց, միաժամանակ, արտաքին վտանգի պահերին կարիքն ունենալով այդ աջակցութեանը, նրա գլխաւորած վարչախումբը պարտաւոր է որոշակի դրական քայլեր կատարել, դէմքով շրջուել դէպի ժողովուրդը, իրական պայքար մղել կոռուպցիայի, իրաւապահ մարմինների կամայականութիւնների, մենաշնորհների սանձարձակութեան, ընտրակեղծարարութեան, պետական պաշտօնեաների ամբարտաւանութեան դէմ: Իշխանութիւնների եւ հասարակութեան յարաբերութիւնները պէտք է կառուցուեն ոչ թէ միակողմանի վերաբերմունքի, այլ փոխվստահութեան եւ փոխաջակցութեան վրայ: Չի կարելի անհոգութեան ժամանակներում արհամարհել ժողովրդին ու ընդդիմութեանը, իսկ դժուարին պահերին ակնկալել նրանց աջակցութիւնը:*

## ԱՐՑԱԽԻ ՎԱՐՉԱՊԵՏ ԱՐԱՅԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԸՆԴՈՒՆԱԾ Է Ս.Դ.Հ.Կ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ



Արցախի Հանրապետութեան վարչապետ Արայիկ Յարութիւնեան Ապրիլ 8-ին հանդիպած է Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Հայաստանի վարչութեան ներկայացուցիչներուն՝ ատենապետ Նարեկ Գալստեանի գլխաւորութեամբ:

Վարչապետը կարեւորած է ապագայի ընելիքները ծրագրաւորելու ընթացքին ողջ հայութեան համախմբուածութիւնը եւ շնորհակալութիւն յայտնած անոնց՝ Արցախին ցուցաբերած օժանդակութեան համար: Ա. Յարութիւնեանի համոզումով՝ անհրաժեշտ է բոլոր ներուժը ուղղել Արցախի անվտանգութեան ամրապնդման գործին, եւ անոր մէջ իւրաքանչիւր հայ պէտք է իր ներդրումը ունենայ:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Հայաստանի վարչութեան ատենապետ Նարեկ Գալստեանի խօսքով՝ Արցախի խնդիրը ողջ հայութեան խնդիրն է, եւ անոնք պատրաստ են որեւէ հարցի մէջ ցուցաբերելու իրենց աջակցութիւնը Արցախին:

## ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՍԱԼԱՄԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՑԻՆ ԱՐՑԱԽԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՆՈՐԱԳՈՅՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ



Հայ քաղաքական երեք կուսակցութիւններու՝ ՍԴՀԿ-ի, ՀՅԴ-ի եւ ՌԱԿ-ի ներկայացուցիչներէ բաղկացած պատուիրակութիւնը այցելեց Լիբանանի վարչապետարան եւ հանդիպում մը ունեցաւ վարչապետ Թամմամ Սալամի հետ:

Հանդիպումը կը վերաբերէր Արցախի եւ Ազրպէյճանի սահմանագօտիին վրայ Ապրիլ 1-5ին, Ազրպէյճանի սանձազերծած պատերազմական գործողութիւններուն պատճառով ստեղծուած իրավիճակին:

Ներկայացուցիչները վարչապետ Սալամին փոխանցեցին տեղեկութիւններ Արցախի վերաբերող զինուորական եւ քաղաքական նորագոյն զարգացումներուն մասին: Շեշտեցին այս բոլորին մէջ Ազրպէյճանի նախայարձակ ըլլալու իրողութիւնը եւ պատերազմական գործողութիւններուն դիմելու մերժուած եղանակը, յայտնելով, որ հայկական կողմը կը մնայ ամուր իր համոզումին մէջ, թէ հակամարտութեան լուծումը բացառապէս քաղաքական եւ խաղաղ բանակցային բնոյթ կրնայ ունենալ միայն:

## ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵՑ ԱՐՑԱԽԻ ՀԵՐՈՍՆԵՐՈՒՆ ՈՒՂԻՈՎ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՈՒԽՏԸ



Կազմակերպութեամբ ՍԴՀԿ «Տխրունի» Ուսանողական Երիտասարդական Միութեան, Նոր Հաճնոյ Թաղամասին մէջ Ապրիլ 9-ի գիշեր տեղի ունեցաւ զօրակցական հաւաք՝ նուիրուած Արցախի քաջարի ժողովուրդին զինուորներուն, նաեւ առ ի յարգանք մարտի դաշտին վրայ ինկած նահատակներու յիշատակին: Պաշտօնական հանդիսութեան նախորդեց հոգեհանգստեան արարողութիւնը՝ ի յիշատակ զոհուածներուն, զոր կատարեցին Նոր Հաճնոյ Սուրբ Գէորգ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տէր Նարեկ Քահանայ Հեճինեանը եւ Ռմէյլի Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տէր Ղեւոնդ Քահանայ Լոշխաճեանը: Նաեւ տեղի ունեցաւ մոմավառութիւն, որուն ծիրին մէջ ներկաները առիթը ունեցան աղօթելու զոհուած զինուորներու եւ քաղաքացիներու յիշատակին:

Նաեւ տեղի ունեցաւ մոմավառութիւն:

Պաշտօնական, կուսակցական, միութենական, գաղութային անձնաւորութիւններու եւ լիբանանահայերու բազմութեան ներկայութեամբ տեղի ունեցած հանդիսութեան ընթացքին խօսքեր արտասանեցին Լիբանանի մօտ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Տիար Սամուէլ Մկրտչեանը, ՍԴՀԿ Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինի անունով՝ Ընկ. Յակոբ Կէրկէրեանը եւ «Տխրունի» Ուսանողական Երիտասար դական Միութեան վարչութեան անունով Ընկ. Տիգրան Միհրանեանը: Վերջինս վերահաստատեց, որ Հնչակեան երիտասարդութիւնը միշտ Արցախի կողքին է, Արցախի հետ է եւ պատրաստ է բոլոր մակարդակներով իր մասնակցութիւնը բերելու մարտնչող Արցախի հայ զինուորին:

Հանդիսութեան ընթացքին նաեւ տեղի ունեցաւ գեղարուեստական յայտագիր եւ տեսաերիզներու ցուցադրութիւն:

## ՇՈՒՏՈՎ ՊԻՏԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒԻՆ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՄԷՋ ՎՆԱՍՈՒԱԾ ՇԷՆՔԵՐԸ



Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան վարչապետ Արա Յարութիւնեան 6 Ապրիլին աշխատանքային այցելութիւն տուած է Մարտակերտի շրջան՝ ռազմական գործողութիւններուն հետեւանքներուն ծանօթանալու նպատակով:

Բնակիչները խրախուսելով ան հաստատած է, որ կարճ ժամանակամիջոցի ընթացքին վերակառուցման աշխատանքներ պիտի իրականանան:

Գործադիր իշխանութեան ղեկավարը Մարտակերտ քաղաքին եւ Մատաղիս ու Թալիշ գիւղերուն մէջ ծանօթացած է 2-5 Ապրիլին ատրպէյճանական ռմբակոծման հետեւանքներուն եւ արձանագրուած վնասներուն, ինչպէս նաեւ հանդիպում ունեցած է տեղւոյն բնակիչներուն հետ: Յարութիւնեան երախտագիտութիւն յայտնած է բնակիչներուն՝ ստեղծուած իրավիճակին մէջ խիզախութիւն դրսեւորելու եւ հայրենի շրջաններուն մէջ մինչեւ վերջ մնալու իրենց վճռականութեան համար:

«Կառավարութեան կողմից արուելու է հնարաւորը թշնամու արկակոծութեան հետեւանքով բնակիչների վնասուած առանձնատները եւ համայնքային ենթակառուցուածքները կարճ ժամանակամիջոցում վերականգնելու համար: Մի քանի օրուայ մէջ քաղաքաշինութեան նախարարութեան համապատասխան մասնագէտների կողմից կը գոյքագրուեն բոլոր վնասները՝ հնարաւոր սեղմ ժամկէտներում դրանց վերականգնման աշխատանքները սկսելու նպատակով», ըսած է վարչապետը: Ան աւելցուցած է, որ վնասուած են թակառոյցներու բնականոն գործունէութեան վերականգնման համար համապատասխան կառոյցներ արդէն լծուած են արտակարգ աշխատանքի:

Այս այցելութեան ընթացքին վարչապետին կ'ընկերակցէին տնտեսութեան նախարար Անդրանիկ Խաչատրեան, Մարտակերտի շրջանային վարչակազմի ղեկավար Վլատիկ Խաչատրեան եւ այլ պաշտօնատարներ:

# ՆՈՒԻՐԵԱԼՆԵՐԸ



**ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱՒԻԹԵԱՆ**

*Ապրիլ 1-ը ճանչցուած է որպէս կատակի եւ ճերմակ սուտերով զուարճանալու օր:*

*Այդ օր, սակայն, Արցախի քաջարի ժողովուրդը որ կատակի կամ զուարճանալու ո՛չ սիրտ եւ ո՛չ ալ տրամադրութիւն ունի, Ազէրիներու կողմէ լայնածաւալ յարձակումի ենթարկուելէ ետք փաստեց որ կատակ չվերցներ եւ պատրաստ է խիստ հակահարուած տալու պաշտպանելու համար իր հողը եւ բարձր պահելու համար իր ազգին պատիւը:*

*Ամէն հայ որքան ալ տարակարծիք ըլլայ Հայաստանի մէջ կիրարկուած քաղաքական ու տնտեսական խնդիրներու եւ հարցերու շուրջ, եւ կամ որքան ալ կասկածամտութեամբ դիտէ հայրենիքի մէջ կատարուած ազգային աշխատանքը ղեկավար քաղաքական մարդոց, կասկածէ վեր կը մնայ անտարակոյս նուիրուածութիւնը հայ զինուորին ու երկրապահ ազատամարտիկին իր հողին ու հայրենիքին հանդէպ:*

*Բանախօսին նիւթը հիմնականին մէջ մանրամասն նկարագրութիւնն էր այն դէպքերուն, որոնք սկիզբ առած են Ա. Աշխարհամարտի աւարտէն ետք զինադադարին ու յաջորդող ամիսներուն_ան ակնարկութիւններ ըրաւ Միջին Արեւելքի ու մասնաւորաբար Կիլիկիոյ շուրջ արեւմտեան յաղթական դաշնակիցներուն՝ Անգլիոյ ու Ֆրանսայի միջեւ այդ շրջանին զարգացած մրցակցութեան, որ յանգեցաւ այդ գօտիէն անգլիացիներու հեռացման ու ֆրանսական ուժերու տեղակայման, այնուհետեւ պարզեց այն դէպքերը, որոնք օրը օրին զարգացած են մասնաւորաբար Այնթապի գօտիին մէջ ու յանգած՝ Թուրքերու կողմէ հայերու դէմ նոր յարձակումներու զուգահեռաբար՝ քեմալական ուժերու եւ ֆրանսացիներու միջեւ ջերմ ու ցուրտ յարաբերութեանց: Այդ զարգացումներն էին որ յանգեցան հայութեան ինքնապաշտպանական կռիւներուն, որոնք թէեւ վերջ գտան զինուորական յաղթանակով, սակայն աւելի ուշ միջազգային խաղերու հետեւանքով հայութիւնը հարկադրուեցաւ հեռանալ իր դարաւոր բնակավայրէն՝ հայրենի հողէն:*

*Բանախօսութիւնը շահեկան էր այն պատճառով որ Թուրք երիտասարդ համալսարանական մը պատմական իրականութիւնները կը ներկայացնէր արդար մօտեցումով հեռու Թրքական խաբեպատիր եւ խեղաթիւրող մօտեցումներէն:*

*Հանդիսութեան պահուն գործադրուեցաւ նաեւ գեղարուեստական յայտագիր_ «Լարք» երաժշտանոցէն չորս պատանիներ՝ Ջութակի քառեակ մը հանդիսականները հմայեցին իրենց գեղեցիկ նուագներով: Յաջող էր նաեւ երիտասարդ հանդիսավարը՝ Ալէն Տիշըքըրքեան, իսկ միութեան վարչութեան անդամներէն՝ ծանօթ արուեստագէտ Թագուհի Արզումանեան...*

Շար.ը էջ 19



# ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒՆ ԱՆԱՂԱՐՏ ՊԱՀԵՆՔ

## Դիմատետրի եւ համացանցի մէջ գործածուած հայերէն լեզուի աղաւաղումները

*ՏՈՔԹ. ՅԱԿՈԲ ԱՅՆԹԱՊԼԵԱՆ*
*«Մեսրոպեան Ուխտ Լեզուապահպանման Միութիւն»*

*Վերջին քանի մը տարիներուն հանրութիւնը մեծ ոգեւորութեամբ արշաւեց դիմատետրի եւ համացանցի միջոցով հաղորդակցելու եւ տեղեկութիւն քաղելու:*

*Հայերուս համար երկսայրի սուրի վերածուեցան այս գիտութեան անծայրածիր շտեմարանն ու հաղորդակցութեան միջոցները այն աստիճան, որ Հայաստան Facebookը կը կոչեն «Օգտատետր», փոխանակ դիմատետրի (չես գիտեր ինչու): Տարօրինակ մտածելակերպ:*

*Մօտաւորապէս տարի մըն է, որ դիմատետրի մէջ որոշ գրութիւններ կը տեղադրեմ եւ մեծ մասամբ նկատողութիւններով եւ ծանօթագրութիւններով որոշ անձերու հայերէն լեզուի եւ բառապաշարի թերութիւնները կը մատնանշեմ, մաքուր հայերէն բառապաշար գործածելու համար: Սակայն, յաճախ ապառաժի անդրդուելի տրամադրութեամբ հակադրութիւններու կը հանդիպիմ...:*

*Ընդհանրապէս ողջամիտ է հանրութիւնը. պատճառաբանութեամբ ու փաստերով կը համոզուին, որ վրիպած են, բայց այդ վրիպումը տարիներու ընթացքին սովորութիւն դարձած է եւ ոչ ոք իրենց նկատողութիւն չէ ըրած կամ ճշդած այդ վրիպումը: Ուստի, յանկարծ, երբ սփիւռքահայ մը մատնանշէ թէ ինֆորմացիա, ռեպորտաժ, ժիւրի, մաէստրօ, կոնսերվատորիա եւլն. բառերը օտար են եւ աւելի հարազատ մայրենի լեզուով բառեր ունինք, ինչպէս. տեղեկութիւն, տեղեկագիր, տեղեկագրութիւն, դատական կազմ, վարպետ, երաժշտանոց, կը վրդովին եւ կ'անհանգստանան:*

*Դիմատետրի մէջ մինչեւ 4 ամիս առաջ ես ալ լատինատառ հայերէն կը գործածէի, արդարանալով, որ՝*

*1) Արհեստավարժական դժուարութիւններ կային նախ հայերէն գրելու, ապա այդ գրութիւնը տեղափոխելու յարմար էջին ու սիւնակը:*

*2) Ամերիկաբնակ հայ նոր սերունդին 80 տոկոսը ճանաչողութիւն չունի մեսրոպատառ հայերէնի: Ասոնց հետ հաղորդակցելու համար 2 միջոց կայ. կամ՝ լատինատառ հայերէն, քանի որ բանաւոր հայերէն կը հասկնան, հակառակ որ հայերէն չեն կրնար կարդալ, կամ ալ՝ անգլերէն լեզուով:*

*Ոմանք ալ հայերէն ուղղագրութեան լաւ չեն տիրեր, ուստի լատինատառ հայերէնով կը հաղորդակցին ծածկելու համար իրենց ուղղագրական անգրագիտութիւնը...:*

*Երբ նկատողութիւն կ'ընէի դիմատետրի մէջ օտար բառերու փոխարէն հայերէն բառեր գործածելու, շառաչուն ապտակը կը հասնէր երեսիս, «Թէ ինչո՞ւ լատինատառ կը գրես, անարգելով մեսրոպատառ հայերէնը եւ մեզի կը քարոզես հայերէն բառեր գործածել, երբ այդ օտար բառերը ընդունուած են Հայաստանի մէջ»: Վերոյիշեալ բացատրութիւններս ամերիկահայ նոր սերունդին մասին համոզիչ չթուացին շատերուն: Ծանօթներու օգնութեամբ հայերէն գիրերը բջջային հեռախօսիս մէջ տեղաւորելով, զինուած, ազատօրէն իջայ հայերէն լեզուի խաչակրութեան դաշտ՝ հայերէնի բառապաշարի մաքրազտման սատարելու:*

*Ցաւալին այն է, որ որոշ մտաւորական եւ ուսեալ հատուած մը երիտասարդ սերունդի, Հայաստանի մէջ կամ Հայաստանէն արտագաղթած, մոլեգին կերպով կը պայքարի օտար բառերը պահպանելու մոլութեան: Հազիւ 10 տոկոսը այս հատուածին, անձայն, առանց հակաճառութեան ընդունեցին, որ բոլոր օտար բառերու գործածութիւնը հայերէն լեզուին մէջ սխալ է եւ պէտք է սրբագրել: Մեծ մասամբ կ'առարկեն որ «միջազգային բառեր են», «մեր պոէտները (բանաստեղծները) գործածած են», «Հայաստանի մէջ ընդունուած բառեր են», իսկ ուրիշներ նախատական ու վիրաւորական բառեր կը գործածեն, հակառակ որ ուսեալ եւ պաշտօնի տէր անձնաւորութիւններ են...:*

*Ինծի համար չափազանց սրտի կսկիծ է եւ անհասկնալի հանելուկ, թէ ինչո՞ւ Հայաստանի նախագահը, վարչապետը, մշակոյթի կամ կրթութեան եւ գիտութեան նախարարները հեռատեսիլէն ելոյթ չեն ունենար, պահանջելով հանրութենէն, որ լատինատառ հաղորդակցութեան եւ օտար բառերու գործածութեան վերջ տան համացանցի եւ դիմատետրի մէջ ու մաքուր հայերէն լեզուով հաղորդակցին:*

*Իհարկէ, նախ համակարգիչի եւ բջջային հեռախօսի ընկերութիւններէն պէտք է պահանջուի եւ պարտադրուի Հայաստանի մէջ հայատառ գիրերու տեղադրումը այս հաղորդակցական գործիքներու մէջ: Ներկայիս հայաստանաբնակ հայերու 50 տոկոսը դիմատետրի անհատական գրութիւնները լատինատառ հայերէնով կը կատարեն:*

*Իսկ ամերիկահայերուն 70 տոկոսը անգլերէն, 20 տոկոսը հայատառ հայերէն եւ 10 տոկոսը լատինատառ հայերէն կը գործածեն:*

*Յո՛ երթաս հայութի՞ւն...*

*Պետականօրէն առաջնորդութիւն, ուղղութիւն տուող չկայ: Վերահսկիչ ազդու մարմին մը գոյութիւն չունի, որ հսկէ թէ որոշ անհատներ՝ ըլլան անոնք խմբագիր, գրող, լրագրող, հաղորդավար կամ պետական պաշտօնեայ, ի՞նչ աւեր կը գործեն իրենց անտարբերութեամբ, պաշտօնի մէջ թերանալով, անիմաստ, հնարուած, շինծու ու արուեստական բառեր դիմատետրի մէջ տեղադրելով, կամ ալ օտար բառերու ծովածաւալ գործածութեամբ իրենց գրութիւններու եւ ելոյթներու մէջ, որոնք կ'արտագրուին ու կը տեղադրուին համացանցի եւ դիմատետրի մէջ:*

*Բացի անհատներէ պետութիւնն է, որ տէր պէտք է կանգնի մեր լեզուի բառապաշարին մաքրութեան... Այլապէս հայերէնի փոխարէն շուտով կ'ունենանք ռուսա-անգլա-հայերէն եւ 20 տարի ետք՝ թուրքա-ռուսա-անգլա-հայերէն:*

*Հայերէնի բառապաշարը տագնապալի վիճակի մէջ է... Նոր սերունդը անսանձ կ'արշաւէ անգլերէն բառերու ներմուծման հայերէնի մէջ. ասոր եթէ աւելցնենք լատինատառ հայերէն գրելը Հայաստանի մէջ, կրնաք երեւակայել թէ հայագիտութեան ո՛վ արժէք պիտի տայ...:*

*Լեզուն մեր ազգային պատկանելութիւնն ու ինքնութիւնը բնորոշող մեր նախնիքներէն ժառանգուած հայերէնի հողին հետ, մեծագոյն գանձերէն մին է: Եթէ Հայաստանի հայը տէր չկանգնի, ո՛վ տէր պիտի կանգնի:*

*Շար.ը էջ 19*



# ԹԱԼԻՇՑԻ ԿԻՆ «ՄԻՇՏ ԷԼ ԿՐԱԿԵԼ ԵՆ, ԲԱՅՑ ՅՈՅՍ ԵՆՔ ՈՒՆԵՑԵԼ, ՈՐ ՏՆԵՐԻ ՎՐԱՅ ՉԵՆ ԿՐԱԿԻ»



**ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ**

Թամարան սովորում էր Մարտակերտի շրջանի Թալիշ գիւղի միջնակարգ դպրոցի առաջին դասարանում: Ասում է՝ տառերն արդէն սովորել են ու պատրաստւում էին Այբբենարանի հանդէսին:

«Երեխաներն արդէն ոտանաւորներն էին սովորում, հանդէս էին անելու», պատմում է Թամարայի տատիկը՝ Ամալիա Օհանեանը, ով ընտանիքի հետ Ապրիլի 1-ի գիշերը Ատրպէյճանի կողմից գիւղի վրայ յարձակումից յետոյ կարողացել է փախչել Թալիշից ու ապաստան է գտել Քարվաճառում՝ եղբօր տանը: Թամարայից բացի, ընտանիքում եւս չորս երեխաներ կան՝ 16-ամեայ Կամօն, 11-ամեայ Քրիստինէն, 5-ամեայ Սիւզաննան ու 2.5-ամեայ Ռուզաննան:

«Գիշերը ժամը 3:30 էր, տանը լրիւ քնած էին: Որ աղմուկ լսուեց, ինձ սկզբից թուաց, թէ մամաս է, գիշերները շատ է վեր կենում, մեծ կին է: Վեր կացայ, որ իջնեմ տեսնեմ ինչ է, հասկացայ, որ մաման չի: Այդ պահին մի անգամ գրադը խփեց մեր բակում, տունը ցնցուեց, մէջն սկսեց ամէն ինչ կոտրուել: Փոքրին լցուեց կոկորդս, սկսեցի գոռալ», յիշում է տիկին Ամալիան:

Ասում է՝ Աստծոյ օգնութեամբ է յաջողուել բոլոր հինգ երեխաներին ողջ դուրս հանել գիւղից: «Եղբօրս տղան պատահական մեր տուն էր եկել իր մեքենայով, ինքը մեզ դուրս հանեց, բերեց Քարվաճառ: Ինքը եթէ մեզ մօտ չլինէր, ես չգիտեմ, թէ ինչ էինք անելու», ապրած սարսափն է վերյիշում տիկին Ամալիան ու աւելացնում.

«Երեխեքը վերմակով ծածկուած էին, ջարդուած ապակին լցուել էր վերմակի վրայ, եթէ երեսները բաց լինէր, երեխեքի երեսը կը կտրտէր»: Մեծ թոռնիկը՝ 11-րդ դասարանցի Կամօ Օհանեանը, վիրաւորուել է, ոտքի մէջ բեկոր է մտել: Երեւան Քարվաճառի հիւանդանոցում բուժում է ստացել, եւ հիմա էլ բժիշկների հսկողութեան տակ է:

«Մենք մեր տանն ամէն ինչ ունէինք, ամբողջ կեանքում տուն ենք սարքել: Մեր տունը մի անգամ էլ էր քանդուել, պատերազմի ժամանակ, դրանից յետոյ մենք սարքել էինք մեր տունը, աւելի լաւն էինք սարքել, ու այսօր նորից նոյնն եղաւ, նորից մեր տունը քանդուեց», ասում է տիկին Ամալիան: Կինն Արցախեան պատերազմում կորցրել է նաեւ որդիներից մէկին. չնայած անդառնալի կորուստներին՝ ընտանիքը կարողացել էր ուժ գտնել ու շարունակել ապրել հայրենի գիւղում: «Մեծ ընտանիք ենք, ինը հոգի, աշխատում էինք, անասուններ էինք պահում, նորմալ ապրում»: Տիկին Ամալիան ոչ միայն իր կորցրած տան համար է ցաւում, այլեւ՝ ամբողջ գիւղի: «Մեր գիւղում բոլորն աշխատող են, բոլորը լաւ էին ապրում: Գիտէ՞ք՝ ինչ դպրոց ունէինք. նոր սարքած, նոր կահաւորած... Ամէն ինչ հողին հաւասարուեց...»:

Թալիշի բնակիչները միշտ են կրակոցների տակ ապրել, բայց յոյս են ունեցել, որ խաղաղ բնակչութեան վրայ թշնամին չի կրակի: «Մտածել ենք՝ դիրքերի վրայ են կրակում, զօրամասի վրայ են կրակում: Էդ օրն էլ սովորականի նման պառկեցինք քնելու, որ առաւօտը վեր կենանք, ամէնքս գնանք մեր գործին: Բայց էսպէս եղաւ...»:

Ապագայի մասին, դեռ չեն կարողանում մտածել: Առայժմ Քարվաճառում են, սակայն հասկանում են, որ ինը հոգով երկար մնալ չեն կարող. հիւրընկալող ընտանիքը եւս բազմանդամ է: Տիկին Ամալիան ասում է՝ եթէ բոլոր գիւղացիները հաւաքուեն, յետ գնան, իրենք էլ կը գնան: «Չենք թողնի մեր հողը, տղաս չի ուզում ուրիշ տեղ ապրել»:

Կինը դժուարանում է պատասխանել այն հարցին, թէ ընտանիքը հիմա առաջնային ինչի կարիք ունի: «Չեմ կարող ասել, թէ ինչ է պէտք, մենք ամէն ինչ ունեցել ենք, ապահով ապրել ենք, ինձ համար շատ դժուար է այդ հարցին պատասխանել», ասում է հինգ անչափահաս երեխաների տատիկը:

Դպրոցական երեք թոռնիկներն առայժմ Քարվաճառում դպրոց կը գնան, ու փոքրիկ Թամարան Այբբենարանի հանդէսին կը մասնակցի Քարվաճառի դպրոցում...

**Թղթակից «Արարատ» հիմնադրամի**

**www.massispost.com**
**daily news updates**

# ՏՕՔԹ. ՇՈՂԻԿ ԱՐՈՅԵԱՆԻ ՆՈՐ ԳԻՐՔԸ «ՃԵՂՔԵԼՈՎ ԵՓՐԱՏԸ» "CROSSING THE EUPHRATES"




Լոս Անճելոսի «Ապրիլ» գրատունը դարձած է Հարաւային Գալիֆորնիոյ հայ գրողներու եւ արուեստագէտներու հանդիպման կարեւոր վայրերէն մին: Գրատան գեղեցիկ աւանդութիւններէն մին է նաեւ իրեն կցուած «Սիրուն» պատկերասրահին մէջ կազմակերպել արուեստի եւ գրականութեան նուիրուած երեկոներ:

Այդպիսի երեկոյ մըն էր, որ տեղի ունեցաւ Շաբաթ Մարտի 23ին, 2016, նուիրուած Շողիկ կամ Շողակաթ (Sharon) Արոյեանի նոր գիրքին, որուն հրատարակութիւնը կը զուգադիպէր Հայոց Ցեղասպանութեան 101րդ տարեդարձին:

Ընտրանի հասարակութեան մը ներկայութեան երեկոյի բացումը կատարեց «Ապրիլ» գրատան սեփականատէր՝ Առնօ Երէցեան: Ան ջերմ խօսքերով ողջունեց «Ճեղքելով Եփրատը» («Crossing The Euphrates. A story of Love and Redempion Inspired by the Armenian Genocide, 1915») գիրքի հեղինակ Տոքթ. Շողիկ-Շողակաթ Արոյեանը (Sharon Aroian): Ան այս հատորով կը ներկայացնէ իր մեծ հօր՝ Գալուստ Մոլոյեանի ապրած ոդիսական կեանքը մեծ Եղեռնի օրերուն:

Այնուհետեւ խօսք առաւ «Ճեղքելով Եփրատը» գիրքի հեղինակ Տոքթ. Շողիկ Արոյեանը: Համակրելի հայուհին՝ համապարփակ կերպով ներկայացուց իր աշխատասիրութիւնը, որ կը բաղկանայ 217 էջերէ եւ 21 գլուխներէ: Գիրքին մէջ առկայ են Շողիկի մեծ հօր Գալուստ Մոլոյեանի սարսափազդու վկայութիւնները, ուր կը նկարագրուին տեղահան հայութեան եւ սովամահ երախաներուն ողբերգական վիճակը տարագրութեան օրերուն:

Հատորին մէջ կայ նաեւ յաւելուած մը, ուր 35 էջերու մէջ տեղ գրաւած են ցեղասպանութեան զոհերու վաւերական նկարներուն միջազգային մամուլէն արտատպուած թղթակցութիւններ, քարտէսներ եւ արխիւային փաստագրութիւններ:

Շողիկ Արոյեան իր գիրքը ներկայացնելու պահուն յուզումով խօսեցաւ նաեւ հազիւ իր անկախութեան տիրացած հայ ժողովուրդի ճակատագրական այլ տխուր երեւոյթներու մասին՝ Բ. աշխարհամարտ, երկրաշարժ... տասնեակ հազարաւոր զոհեր, անօթեւան եւ անպատսպար հայեր, որոնց անձամբ ականատես եղած է Կիւմրիի

Շար.ը էջ 19





Հովանաւորութեամբ
Արհ. Միքայէլ Եպիսկ. Մուրատեանի
(Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի Կաթողիկէ Հայոց Թեմին)

Կազմակերպութեամբ
Գլէնտէյլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ Աթոռանիստ Եկեղեցւոյ Մշակութային Յանձնախումբին

ԳԻՆԵՁՕՆ
Դոկտ. Հրանդ Աճէմեանի
«ՀԱՅ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՇԱՐԱԿՆՈՑԸ» հատորին

Գիրքը կը ներկայացնէ
Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան

Սրտի խօսք՝
Դոկտ. Տէր Զաւէն Աւագ Քհնյ. Արզումանեան

Սրտի խօսք՝
Կրէկ Սարգսեան

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, Ապրիլ 29, 2016,
երեկոյեան ժամը 7:30ին,
Գլէնտէյլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Հայ Կաթողիկէ Աթոռանիստ եկեղեցւոյ
«Ռէմոն եւ Անի Գույումճեան սրահին մէջ,

1510 East Mountain St.,
Glendale, CA 91207

Գեղարուեստական պատշաճ յայտագիր

Մուտքը ազատ Հիւրասիրութիւն

## ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ՝ ԸՍՏ ԶԱՐԴԵՐՈՒ

*16-րդ դարուն մատանին կը բնորոշէր անձի պատկանելիութիւնը որեւէ դասակարգի: Օրինակ՝ բթամատին մատանի կը դնէին առեւտրականները: Միջնեմատին մատանի դնողները կը համարուէին աղքատ մտաւորականներու դասին պատկանող, անոնք մեծ մասամբ ուսանողներ էին:*

*Չորրորդ մատը կը համարուէր սիրոյ մատ: Հին դարերուն ամուսնական մատանիները կը դնէին նոյնիսկ բթամատին վրայ: Մեր օրերուն ամուսնական մատանին կը դնեն նաեւ միջնեմատին՝ բացատրելով, որ ատիկա այն մատն է, ուրկէ իւրայատուկ արիւնատար անօթ կը կապուի ուղիղ սրտին հետ:*

*Կարծիք կայ, որ մատանիները կը զօրացնեն կամ կ՛ընդգծեն անձին խառնուածքը, որուն համար պատասխանատու է մատներէն որեւէ մէկը: Ցուցամատին մատանի դնողները կը համարուին իշխանասէր, միջնեմատին՝ առաջին հայեացքէն սառնասիրտ համարուող անձնաւորութիւններ, բայց իրականութեան մէջ անինքնավստահ են եւ փխրուն:*

*Յուզական առումով զուսպ են, սովոր են ճնշելու իրենց զգացումները, շատ դժուար կը վստահին դիմացիններուն:*

*Չորրորդ մատին մատանի դնելը սովորաբար հասարակութեան մէջ նշան կը համարուի ամուսնացած ըլլալու կամ չըլլալու, բայց եթէ ոեւէ մէկը կը նախընտրէ մատանին կրել այդ մատին, ուրեմն այդ անձը կը սիրէ հասարակութիւնը եւ չի սիրեր մինակ մնալ, շփուող է եւ աշխոյժ:*

*19-րդ դարուն, երբ իգական սեռը ճկոյթին մատանի դնէր, ատիկա կը նշանակէր, որ ան ունի անկախ բնաւորութիւն, կը ձգտի ազատութեան եւ կը պայքարի կիներու իրաւունքներու հաստատման համար: Հոգեբանները կը կարծեն, որ ճկոյթին մատանի դնող անձնաւորութիւնը աւելի մշակութային է, օժտուած ստեղծագործական ընդունակութիւններով, սակայն աւելի ինքնահաւան է եւ ունի եսակեդրոն հիմք:*

*Նշանակութիւն ունի նաեւ այն, թէ որ ձեռքին դրուած է զարդը: Աջ ձեռքին վրայ առկայ զարդերը կը յուշեն, որ տուեալ անձը այնպիսին է, ինչպէս կ՛երեւի:*

*Բթամատ- Յուզական, մեծ ուժով օժտուած անձնաւորութիւն: Բթամատին մատանի դնելը կը նշանակէ, որ տուեալ անձը ամէն ձեւով կը փափաքի առանձնանալ հասարակութենէն, տարբերիլ բոլորէն: Այս մարդոց որեւէ բանի մէջ համոզելը անիմաստ ժամանակի կորուստ է: Անոնց հիմնական նպատակը որեւէ ձեւով ինքնահաստատուիլն է:*

*Ցուցամատ- Ցուցամատին մատանի կրող անձը կը համարուի փառասէր, կարծես թէ կ՛ուզէ ըսել, նայեցէք ինծի, տեսէք ինչպիսին եմ ես: Աւելի եսակեդրոն անձեր են, որոնք շատ կը սիրեն ճանաչում, փառք, իշխանութիւն, անոնք սովորաբար իրենց շրջապատին մէջ առաջնորդներ կը համարուին:*

*Միջնեմատ- Սովորաբար այս մատին մատանի կը կրեն այն անձերը, որոնք կեանքի մէջ աւելի շատ կը յարգեն հոգեւոր արժէքները: Անոնց հիմնական առանձնայատկութիւններէն են չափազանցուած նուիրուածութիւնը, հաւատարմութիւնը, խոհեմութիւնն ու ուշիմութիւնը: Անոնք վստահ են, որ կը տարբերին մնացեալէն:*

*Մատնեմատ- Այս մատին դրուած զարդը կ՛ընդգծէ տուեալ անձնաւորութեան հակուածութիւնը շքեղութիւններուն: Կը ձգտին միշտական հաճոյքներու եւ ժամանակը հաճելի անցնելու: Ատոր հետ մէկտեղ կը համարուին ռոմանթիկ անձնաւորութիւններ: Արտաքին աշխարհի հանդէպ ունին անտարբեր վերաբերմունք: Անոնք լաւատես են: Այն կիներ, որոնք այս մատին ամուսնական մատանիի հետ մէկտեղ կը կրեն նաեւ այլ մատանի, ատիկա նշան է, որ անոնք կ՛ուզեն ամէն ձեւով ընդգծել սեփական անձի կարեւորութիւնն ու արտաքին հմայքը:*

*Ճկոյթին դրուած զարդը կը բնորոշէ իւրայատուկ մտածողութիւն, կիրք, նուրբ քմահաճոյքներ: Ճկոյթին մշտապէս առկայ մատանին նշան է բնաւորութեան փոփոխականութեան, ինքնասիրահարուածութեան:*

*Վերջին տարիներուն նաեւ գիտնականները կը փորձէին ապացուցել մատին դրուած զարդերուն կապը անձի ֆիզիքական առողջութեան հետ, սակայն փաստերը շատ քիչ էին, եւ շատ մը բժիշկ-մասնագէտներու կողմէ չընդունուեցան ու ժխտուեցան:*

*Չափազանց շատ զարդերու առկայութիւնը կը բնութագրէ անձին ձգտումը ամէն ձեւով ինքզինք ընդգծելու հասարակութեան մէջ, սեփական դիրքը ցոյց տալու եւ իւրայատկութիւնը ապացուցելու փորձ:*

*Թանկարժէք զարդերը կը բնութագրեն հեղինակութիւն, վերամբարձութիւն:*

*Ճաշակով ընտրուած, նուրբ զարդերու առկայութիւնը կը բնութագրէ անձի զգացմունքայնութիւնը, դիմացիններու հետ ներդաշնակ յարաբերութիւններ կառուցելու ձգտումն ու կարեկցանքը, սրտցաւութիւնը ընկերներու համար:*

*Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.*

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ
## ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ՄԵԶԻ ԿԸ ՎՆԱՍԵՆ

*Կան սովորութիւններ, որոնց կրկնութիւնը ժխտական ազդեցութիւն կ՛ունենայ մեր հոգեկան աշխարհին վրայ: Յիշենք անոցմէ քանի մը հատը:*

*1-Չներել ուրիշին: Միշտ կեդրոնանալը ուրիշին սխալին վրայ եւ անոր չներելը պատճառ կը դառնայ ժխտական մտածումի զարգացումին եւ որպէս հետեւանք ապագային ընկճախտի-*depression *զարգանալուն:*

*2-Դուն քեզ չներել: Յաճախ կատարուած սխալի մը համար մենք մեզ չենք ներեր: Այս ընթացքը նոյնպէս կ՛աւելցնէ ժխտական մտածումը ընկճախտի վերածուիլը ժամանակի հարց է միայն:*

*3-Ծայրայեղութիւն: Մտածումի մէջ ծայրայեղութիւնը կրնայ վնասել մեր առողջութեան: Միջին մտածումի բացակայութիւնը վնասակար է մեզի համար: Օրինակ կ՛ուզենք որ մեր յարաբերութիւնը ուրիշներու հետ ըլլայ կատարեալ, առանց որեւէ սխալի: Այս մէկը անկարելի է: Երբ հանդիպինք որեւէ սխալի այս յարաբերութեան մէջ կը նեղուինք ու կը խզենք ամէն կապ: Փորձենք գտնել ոսկեայ միջինը մարդկային յարաբերութեան մէջ:*

## ԸՆՏԱՆԻՔՆ ԱՄՈՒՐ Է,
## ԵԹԷ ԱՅՆՏԵՂ ԶԱՐԳԱՆԱԼՈՒ ՄԻՏՈՒՄ ԿԱՅ

*Ամուր հիմերով ընտանիք ստեղծելու գլխաւոր նախապայմաններէն մէկը այն է, որ նոր կազմաւորուող այդ «համակարգը» բարենպաստ միջավայր ըլլայ անդամներէն իւրաքանչիւրի անձնական զարգացման համար: Յիշենք, որ ընտանիքը սերունդը շարունակելու գործիք չէ: Նման մտածողութեան արդիւնքն է, որ կը հանդիպինք համատեղ կեանքի այդքան չյաջողած դէպքերու: Եթէ մտածենք ընտանիքի մասին կեանքի նոր փուլի անձնական զարգացման տեսանկիւնէն, միանգամայն պիտի առաջնորդուինք այլ սկզբունքներով՝ ընտանիք ստեղծելու ընթացքին:*

*Անկեղծօրէն հարցուցէք դուք ձեզի. «Իսկ այս մարդու հետ ընտանիք կազմելով՝ ի՞նչ զարգացում կ՛ակնկալուի ինձմէ: Ան պատրա՞ստ է յառաջընթացի իր կեանքին մէջ: Իսկ զիս կը հետաքրքրէ՞ զարգացման անոր ընտրած ուղին»: Եթէ ունիք երազանքներ եւ ծրագիրներ, որոնց իրականացումը կարեւոր է ձեզի համար եւ վտանգուած՝ նորաստեղծ ընտանիքի պարագային, հաւատացէք, որ ձեր միութիւնը արդէն ամուր հիմերու վրայ չէ. անբաւարարուածութիւնը օր մը գլուխ պիտի բարձրացնէ: Ի հարկէ, պիտի հարցնէք, թէ ուր մնաց սէրը այս դատողութիւններու կողքին: Զոյգերու մեծ մասը այդպէս ալ կը վարուի. կը սիրահարուին եւ կ՛ամուսնանան, որովհետեւ «չեն կրնար ապրիլ առանց մէկը միւսին: Բայց շատ շուտով պարզ կը դառնայ, որ միայն սէրը քիչ է: Երիտասարդ ընտանիքը կը բախի կենցաղային խնդիրներու, կը մեծնան յաւակնութիւնները իրարու հանդէպ, եւ նոր միայն ի յայտ կու գան այն անհամատեղելիութիւնները, որոնք կը քօղարկէր «սէր»ը: Ընտանիք պէտք է կազմել անոր հետ, որ կ՛երթայ նոյն ուղղութեամբ, որով դուք կ՛երթաք, ի դէպ՝ նոյն արագութեամբ:*

*Երբ ընտանիքը նպաստաւոր միջավայր կը դառնայ անձի անհատական զարգացման համար, կարելի կ՛ըլլայ նաեւ «սիրել»ը, եւ չի ստեղծուիր իրավիճակ, երբ «հոգիդ բան մը կ՛ուզէ, բայց պարտադրուած է հաշտուելու եղածին հետ»: Ատիկա կը քայքայէ նախ մարդը, յետոյ՝ անխուսափելիօրէն նաեւ այն միջավայրը, որ «կը ճզմէ» զինք, այս պարագային՝ ընտանիքը:*

## ՁԵՐ ԴԷՄՔԻՆ ՁԵՒԸ ԻՆՉ Կ՛ԸՍԷ ՁԵՐ ՄԱՍԻՆ

*Դէմքին ձեւը կրնայ բացայայտել անձի տեսակը, պատմել անոր կեանքի սկզբունքներուն մասին: Թէեւ մարդոց մեծամասնութիւնը ունի համադրուած դիմաձեւ, օրինակ, կլոր եւ քառակուսի համադրութիւն, այնուամենայնիւ, կան մարդիկ, որոնց դիմաձեւը յստակ կը հասկցուի:*

*Ուղղանկիւն դիմաձեւ: Այս դիմաձեւով մարդիկ ունին քառակուսի ճակատ եւ կզակ: Անոնք կը տարբերին նախանձելի տրամաբանութեամբ եւ շատ լաւ մտածողութեամբ, սակայն շատ ջանք կը գործադրեն իրենց մտորումներուն մէջ: Իբրեւ կանոն անոնք կը ծրագրեն քայլերը եւ հազուադէպ կը խօսին իրենց զգացումներուն մասին: Մշտապէս յառաջացող ներքին լարուածութիւնը հանելու համար անոնք կ՛աշխատին ջանասիրաբար:*

*Կլոր դիմաձեւ: Այսպիսի դիմաձեւը կը բնորոշուի այտոսկրէն ներքեւ թմբլիկ այտերով: Ատիկա ցոյց կու տայ, որ անձնաւորութիւնը բարի է, այլ մարդոց հետաքրքրութիւնները կը դասէ իր նախասիրութիւններէն վեր: Այդ պատճառով, այսպիսի մարդիկ սովորաբար կ՛ենթարկուին ինքնահաւան եսասէրներուն:*

*Ադամանդի ձեւ: Սուր ճակատ եւ քիթը շեղանկիւն կը ստեղծեն երկարաւուն այտոսկրերու օգնութեամբ: Այդպիսի մարդիկ կը սիրեն իրավիճակը իրենց հսկողութեան տակ վերցնել: Անոնք կեդրոնացած են մանրուքներու վրայ, ինչի շնորհիւ անոնք կ՛ըլլան լաւ աշխատողներ: Յստակ են իրենց խօսքերուն մէջ եւ լաւ կապ կ՛ունենան այլ մարդոց հետ:*

*Հաւկըթաձեւ դիմաձեւ: Այս տիպի մարդիկ ունին երկարաւուն դէմք: Անոնք գիտեն բոլոր ճիշդ բաներու մասին եւ կրնան ըսել այնպիսի բառեր, որոնք անպայման հաճելի կը թուին խօսակիցին: Անոնք կը տրամադրեն իրենք իրենց հանդէպ, սակայն շատ կեդրոնացած են անթերի երեւնալու ցանկութեան վրայ:*

*Քառակուսի դիմաձեւ: Ոչ մեծ դէմք՝ լայն ճակատով եւ կզակով: Այսպիսի մարդիկ շատ համբերատար են եւ լի խանդավառութեամբ:*

*Սրտանման դիմաձեւ: Այս տիպի մարդիկ ունին լայն ճակատ եւ նեղ կզակ: Անոնք ունին անհաւանական ներքին ուժ եւ շատ յամառ են: Այդ ներքին ուժը զանոնք կը տանի դէպի դրուած նպատակներու իրականացում: Անոնք ունին ուժեղ ներքին ձայն:*

*Տանձանման կամ եռանկիւն դիմաձեւ: Այս տիպի մարդիկ ունին նեղ ճակատ եւ լայն ներքին ծնօտ: Անոնք կ՛ուզեն ըլլալ գլխաւորը: Այս տեսակի մարդիկ շատ յաճախ յաջողակ կ՛ըլլան: Հնարաւորութիւններու սահմաններուն մէջ լաւ խնամուած ըլլալ:*

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

# ԱՐԹՈՒՐ ԱԲՐԱՀԱՄԸ ԶՐԿՈՒԵՑ ԱԽՈՅԵԱՆԱԿԱՆ ՏԻՏՂՈՍԻՑ




*Պրոֆեսիոնալ բռնցքամարտի սուպերմիջին քաշային կարգում WBO վարկածով աշխարհի ախոյեան Արթուր Աբրահամը մեքսիկացի Խիլբերտօ Ռամիրեսի հետ մենամարտում պարտուեց միաւորներով եւ զրկուեց տիտղոսից: Մենամարտը Լաս Վեկասում էր:*

*WBO վարկանիշային աղիւսակի առաջին համար Ռամիրեսը միաւորներով յաղթեց առաջին հինգ ռաունդներում, Աբրահամն ուժեղ էր 6-րդ ռաունդում, յաջորդ երեք ռաունդներում դարձեալ յաղթանակ տարաւ մեքսիկացի յաւակնորդը, 10-րդ ռաունդում առաւելութիւնը Աբրահամի կողմն էր: Նախավերջին ռաունդում դարձեալ յաղթեց Ռամիրեսը եւ վերջին ռաունդում Աբրահամի միակ խնդիրը նոկաուտով մրցակցին տապալելն էր, սակայն աւելի երիտասարդ մրցակիցը կարողացաւ դիմանալ վճռական ռաունդում եւս եւ խլեց ախոյեանական տիտղոսը՝ 120:108, 120:108, 120:108:*

*Երկու բռնցքամարտիկների քաշն էլ 76.2 կգ էր:*

*Աբրահամը պարտութիւն չէր կրել 2013թ. Մարտի 23-ից, երբ տիտղոսը տանուլ տուեց գերմանացի Ռոբերտ Շտիգլիցին: Դրանից յետոյ հայ բռնցքամարտիկ տարել էր ութ անընդմէջ յաղթանակ, այդ թւում երկուական անգամ Շտիգլիցի եւ անգլիացի Փոլ Սմիթի նկատմամբ:*

*24-ամեայ Խիլբերտօ Ռամիրեսը դեռ պարտութիւն չի ունեցել պրոֆեսիոնալ ռինգում (34 յաղթանակ): 36-ամեայ Աբրահամը նախորդ անգամ ԱՄՆ-ում մենամարտել էր 2012-ի Մայիսի 14-ին՝ Գալիֆորնիայում պարտուելով ամերիկացի Անդրէ Ուորդին: Հայ բռնցքամարտիկը նախորդ մենամարտն անցկացրել էր 2015-ի Նոյեմբերի 21-ին Գերմանիայի Հանովեր քաղաքում, որտեղ միաւորներով յաղթել էր անգլիացի Մարտին Մարէյին:*

# ՕԶԲԻԼԻՍ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՒԱՔԱԿԱՆՈՒՄ ԻՄ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐՆ ԵՆ ՄԽԻԹԱՐԵԱՆՆ ՈՒ ՊԻԶԵԼԻՆ



*Հայաստանի հաւաքականում իմ թարգմանիչներն են Մխիթարեանն ու Պիզելին, բայց հիմա արդէն գրեթէ ամէն ինչ հասկանում եմ հայերէն, ասել է սպանական «Ռայօ Վալիեկանոյի» եւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Արաս Օզբիլիսը:*

*«Նախկինում ունէի հայերէնի թարգմանիչի կարիք, հիմա աւելի լաւ եմ հասկանում: Միայն խօսելն է բարդ, ստիպուած եմ երկար մտածել, քանի որ գիտեմ շատ լեզուներ՝ թուրքերէն, հոլանդերէն, անգլերէն, ռուսերէն: Հասկանում եմ գերմաներէն, «Ռայօ Վալիեկանոյում» խօսում են սպաներէն, ստիպուած սովորում եմ:*

*Եթէ փողը լինէր ինձ համար կարեւոր, ապա կ'ընտրէի Հոլանդիան, որի անձնագրով կ'ունենայի երկու անգամ աւելի շատ ճանապարհորդելու հնարաւորութիւն: Ես ընտրել եմ սրտով, ընտրութիւնը հեշտ չէր: Ֆուտպոլիստի համար կարեւոր է խաղալ աւելի ուժեղ հաւաքականում, բայց ես ցանկացայ օգտակար լինել իմ ծնողների հայրենիքին: Ինձ հրաւիրում էին Հոլանդիայի երիտասարդական հաւաքական, բայց ես երկու անգամ եղայ Հայաստանում եւ հասկացայ, որ ցանկանում եմ խաղալ այստեղ»,- Օզբիլիսի խօսքը մէջբերում է matchtv.ru-ն:*

*Յիշեցնենք, որ Մարտի 25-ին տեղի ունեցած Հայաստան - Պելառուս (0:0) ընկերական խաղում 26-ամեայ Օզբիլիսը մեկնարկային խաղում էր եւ անցկացրեց 63 րոպէ:*

# «ՌԷԱԼ ՍՈԼԹ ԼԷՅՔԸ» ՅԱՂԹԱՆԱԿ ՏԱՐԱՒ ԵՈՒՐԱ ՄՈՎՍԻՍԵԱՆԻ ՀԵՏ

*Ֆուտպոլի հիւսիս-ամերիկեան ՄԼՍ-ի կանոնաւոր առաջնութեան խաղում «Ռէալ Սոլթ Լէյքն» ընդունեց «Կոլորադօ Ռեփիդսին» եւ առաւելութեան հասաւ նուազագոյն հաշուով: Միակ կոլը 72-րդ րոպէին խփել է Պլատան: Դաշտի տէրերի կազմում ամբողջ հանդիպումն անցկացրեց Հայաստանի ազգային հաւաքականի յարձակուող Իւրա Մովսիսեանը, որը 83-րդ րոպէին ստացել է դեղին քարտ:*

*«Ռէալ Սոլթ Լէյքը» հինգ խաղից յետոյ 11 միաւորով բարձրացաւ Արեւմուտքի մրցաշարային աղիւսակի երկրորդ տեղ եւ մէկ միաւոր է զիջում առաջատար «Սպորտինգ Կանզաս Սիթիից»:*

# Հ.Մ.Մ. ՅԱՂԹԱԿԱՆ

*Հ.Մ.Մ.ի ֆութպոլի խումբը Կիրակի Ապրիլ 10, 2016ին մրցումին յաղթելով Mansion Picture FC խումբին դէմ տարաւ փառաւոր յաղթանակ 4-0 հաշուով:*

*Իր աւարտական մրցումը տեղի պիտի ունենայ Կիրակի, Ապրիլ 17, 2016ին կէսօրէ ետք ժամը 1:00ին, մրցակից ունենալով Grasshoppers խումբը, հասցէն 363 East Villa Street, Pasadena:*

*Կը խնդրուի Հ.Մ.Մ.ի համակիրներէն ներկայ գտնուիլ քաջալերելու համար Հ.Մ.Մ.ի մեր մարզիկները:*

# ՊՐԵՄԵՐ ԼԻԳԱՅԻ ԱՌԱՋԱՏԱՐ «ԼԵՍԹԵՐԻ» 5-ՐԴ ԱՆԸՆԴՄԷՋ ՅԱՂԹԱՆԱԿԸ

*Ֆուտպոլի Անգլիայի առաջնութեան 33-րդ տուրում առաջատար «Լեսթեր Սիթին» հիւրընկալուեց Պրեմյեր լիգայում տեղը պահպանելու համար պայքարող «Սանդերլենդի» հետ եւ առաւելութեան հասաւ Անգլիայի հաւաքականի յարձակուող Ջէյմի Վարդիի դուբլի շնորհիւ՝ 2:0:*

*Իտալացի Կլաուդիօ Ռանյերիի գլխաւորած թիմն Անգլիայի առաջնութիւնում տարաւ 5-րդ անընդմէջ յաղթանակը: Նախորդ չորս հանդիպումներում «Լեսթերը» յաղթել էր նուազագոյն հաշուով:*

*«Լեսթերը» վաստակել է 72 միաւոր եւ արդէն 10 միաւոր է առաջ երկրորդ տեղում ընթացող «Տոտենհեմից», որը 33-րդ տուրում կ'ընդունի «Մանչեսթեր Իւնայթեդին»:*

*Առաջնութեան աւարտին մնացած հինգ խաղերում «Լեսթերի» մրցակիցները կը լինեն «Վեստ Հեմը», «Սուոնսին», «Մանչեսթեր Իւնայթեդը», «Էվերտոնն» ու «Չելսին»:*

# «ԲՈՐՈՒՍԻԱՆ» ԲԱՒԱՐԱՐՈՒԵՑ 1 ՄԻԱՒՈՐՈՎ, ՄԽԻԹԱՐԵԱՆԸ ԽԱՂԱՑ ԸՆԴՄԻՋՈՒՄԻՑ ՅԵՏՈՅ

*Ֆուտպոլի Գերմանիայի առաջնութեան 29-րդ տուրում Դորտմունդի «Բորուսիան» հիւրընկալուեց Գելզենկիրխենի «Շալկէին» եւ բաւարարուեց ոչ ոքի արդիւնքով՝ 2:2:*

*«Բորուսիայի» եւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը փոխարինման դուրս եկաւ ընդմիջումից անմիջապէս յետոյ: Դրուագներից մէկում, անկիւնայինի խաղարկման ժամանակ «Շալկէի» ֆանատներն իրեր են նետել Մխիթարեանի ուղղութեամբ: Մրցավարը մի քանի վայրկեան ընդմիջել է հանդիպումը:*

*«Բորուսիան» 68 միաւորով երկրորդ տեղում է եւ մրցաշարային աղիւսակը գլխաւորող Միւնխենի «Բաւարիային» զիջում է 7 միաւոր:*

# «ԱՍԱՑԻՆ ARMENIAN BOXING TEAM-Ի ՄԱՐԶԱՀԱԳՈՒՍՏՈՎ ՍԱՄՍՈՒՆՈՒՄ ՉՔԱՅԼԵՆՔ»

*Մրցավայրում ենք, արդէն հասցրել ենք մարզուել, ամէն ինչ կարգին է, իսկ ինչ վերաբերում է մեր մարզահագուստին, որի վրայ գրուած է «Armenian Boxing Team», մեզ ասացին, անվտանգութիւնից ելնելով, այդ մարզահագուստով քաղաքում չքայլենք: Այդ մասին Թուրքիայի Սամսուն քաղաքից ասել է բռնցքամարտի Հայաստանի հաւաքականի գլխաւոր մարզիչ Կարէն Աղամալեանը ՀԱՕԿ լրատուականի հետ զրոյցում:*

*Հայաստանի թիմը կը մասնակցի Ռիոյի Օլիմպիական խաղերի վարկանիշային մրցաշարին: Հաւաքականին ուղեկցում են անվտանգութեան 4-5 աշխատակիցներ:*

*«Մրցավայրում եւ մարզումների ժամանակ կարող ենք հանգիստ հագնել «Armenian Boxing Team» գրութիւնով մարզահագուստը: Անվտանգութեան աշխատակիցները հիւրանոցի առաջին յարկում են եւ եթէ գնում ենք դուրս, խանութ կամ պարզապէս զբօսանքի, նրանք մեզ ուղեկցում են: Նախկինում չեմ յիշում, որ նման զգուշաւորութիւն լինէր եւ անվտանգութեան աշխատակիցներն ուղեկցեն թիմին, սակայն աւելորդ զգուշաւորութիւնն ու ապահովութիւնը չի խանգարի: Մարզիկները չեն նեղւում նրանց ներկայութիւնից, շատ հանգիստ են եւ ազատ»,- նշել է Աղամալեանը:*






## ԱՍՏՂԵՐԸ Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ** Մարտ 21-Ապրիլ 19
Մեծ երազներ ունիս եւ դէպի յառաջ ապագային կը նայիս մեծ ակնկալութեամբ: Ինքնաշարժի ճամբորդութիւններ շատ կը սիրես եւ գեղեցիկ վայրերը շատ կը գնահատես: Ամառնային արձակուրդ մը ծրագրելու քայլերը առնելու ես:
Բախտաւոր թիւերդ են: 4,7,17,25,26

**ՑՈՒԼ** Ապրիլ 20-Մայիս 20
Երիտասարդ զոյգի մը հետ պիտի վերածանօթանաս որոնց կը ճանչնայիր տարիներ առաջ: Կողակիցիդ տուած խոստումդ կատարէ եւ շարունակէ հոգալ անոր պէտքերը առանց գանգատի: Նոր լուսինը յառաջիկայ օրերուն յաջողութիւն պիտի բերէ քեզի:
Բախտաւոր թիւերդ են: 1,6,11,25,31

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** Մայիս 21-Յունիս 20
Զգացումներուդ ամբողջութեամբ կը տիրապետես եւ ցաւերդ ու նեղութիւններդ երբեք չես արտայայտեր: Սրտիդ մէջ ձայն մը յուսայատութիւն կը բացագանչէ, սակայն կամքիդ զօրաւոր ուժը կը յաղթահարէ անոր: Վնասակար ճամբաներէ հեռու մնացիր:
Բախտաւոր թիւերդ են: 6,10,18,22,33

**ԽԵՑԳԵՏԻՆ** Յունիս 21-Յուլիս 22
Կեանքդ դժուարին կացութեան մը մէջ ըլլալով հանդերձ՝ ինքզինքդ միշտ ուրախ կը ձեւացնես շուրջիններուդ: Մի պայքարիր անկարելիին հետ, այլ ընդունէ ճակատագիրդ: Շատ զուարճալի օրեր կը սպասեն քեզի եւ ընտանիքիդ համար:
Բախտաւոր թիւերդ են: 12,19,21,26,31

**ԱՌԻԾ** Յուլիս 23-Օգոստոս 22
Խիղճդ շատ հանգիստ է եւ շատ խաղաղ կենցաղ մը ունիս եւ ամէն բան դիւրին կը թուի ըլլալ քեզի: Գործատիրոջդ մտիկ ընելու եւ հնազանդելու ես, եթէ կ'ուզես պաշտօնդ պահել: Մեծ պատասխանատուութիւն ունիս ընտանիքէդ ներս:
Բախտաւոր թիւերդ են: 9,18,21,27,35

**ԿՈՅՍ** Օգոստոս 23-Սեպտեմբեր 22
Կեղծաւոր մարդիկ պիտի փորձեն խաբել քեզ, սկզբունքիդ վրայ հաստատ մնացիր, մի վարակուիր անոնց խօսքերէն: Շատ կարեւոր դէպքի մը ականատես պիտի ըլլաս, լաւ ուսումնասիրէ պատահածը, որովհետեւ շատ մը բաներ կախեալ պիտի ըլլան անկէ:
Բախտաւոր թիւերդ են: 4,13,20,30,34

**ԿՇԻՌՔ** Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22
Յատկանշական պատահար մը քեզի պիտի յիշեցնէ մանկութեանդ ուրախ օրերը: Գանձեր գտնելու ետեւէն ժամանակդ մի վատներ, գոհացիր ունեցածներովդ: Երբ կեանքդ հապճեպով եւ անհոգութեանբ ապրիս՝ պիտի չվայելես առօրեայ լաւութիւնները:
Բախտաւոր թիւերդ են: 3,12,21,31,33

**ԿԱՐԻՃ** Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21
Անձնական միջոցներովդ եւ անխոնջ աշխատանքովդ յաջողած ես կեանքիդ մէջ եւ կը փորձես նոյնը փոխանցել սիրելիներուդ: Հաւաքոյթներու եւ խնճոյքներու երթալը քեզի երբեք հաճոյք չպատճառեր, կը նախընտրես տանդ մէջ մնալ եւ կարդալ:
Բախտաւոր թիւերդ են: 8,14,26,30,34

**ԱՂԵՂՆԱՒՈՐ** Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21
Երբեմն կը ստիպուիս անկարողութեան ենթարկուիլ եւ օգնութիւն խնդրել ուրիշներէ, գէշ մի զգար: Երբ ակնկալած արդիւնքներդ չ'ստանաս՝ կը նեղուիս ու կը դժգոհիս: Յիշատակելի օրեր պիտի վայելես բարեկամի մը հետ միատեղ:
Բախտաւոր թիւերդ են: 4,13,28,29,31

**ԱՅԾԵՂՋԻՒՐ** Դեկտեմբեր 22-Յունուար 19
Փորձառութիւն մը կեանքդ պիտի փոխէ դէպի լաւը եւ կարծես քեզ աւելի համբերող եւ հասկցող պիտի դարձնէ: Աշխատանքներդ շատ արդիւնաւոր պիտի դառնան, սակայն գործընկերներէդ մին դժգոհութիւն պիտի ցուցաբերէ:
Բախտաւոր թիւերդ են: 9,15,20,24,33

**ԾՈՎԱՆՈՅՇ** Յունուար 20-Փետրուար 18
Շատ մեծ խռովութիւն մը պիտի ունենաս քեզի սիրելի անձի մը հետ, սակայն ինչպէս միշտ? շուտով պիտի լուծես հարցը: Համբերատար եղիր: Ֆիզաքական գետնի վրայ կարգ մը հարցեր պիտի գրաւեն ուշադրութիւնդ: Լաւ օրեր քեզ կը սպասեն:
Բախտաւոր թիւերդ են: 2,5,8,22,34

**ՁՈՒԿ** Փետրուար 19-Մարտ 20
Մեծ որոշումներ առնելու դժուարութիւններ կ'ունենաս, ընտանիքիդ անդամներէն մէկուն յամառութեան պատճառով: Հաւաքոյթի մը կը պատրաստուիս որը յաջող եւ խոստմնալից արդիւնքներ պիտի ձգէ: Հեռուները մի փնտռեր ուրախութիւնդ:
Բախտաւոր թիւերդ են: 9,14,16,25,30

## ՆՈՒԻՐԵԱԼՆԵՐԸ

*Շարունակուածէջ 7-էն*

*մեր բանակը Իսրայէլի բանակի ուժին հաւասար դարձնելու, եւ այդ մակարդակով Ռուսիոյ գործակից դառնալու, փոխանակ անոր ուժին վստահելու կամ անոր գործակալը մնալու ...:*

*Ապրիլեան Եղեռնի յիշատակումի այս ամսուն կեցցեն ՆՈՒԻՐԵԱԼՆԵՐԸ հայ ազգին: Անոնք որոնք յաճախ կ՛ապրին գիւղական խոնարհ խրճիթներու մէջ կամ կը գտնուին Մեծարենցի նկարագրած «Դաշտի ճամբու մը վրան կամ ստորոտը լեռան» եւ կ՛ըլլան առաջին անսացողները ահազանգի կանչին երբ հայրենիքը կը կանչէ եւ ազգի փրկութիւնը կը պահանջէ: Անոնք մեր անթաղ զոհերու վրէժ պահանջող երկնային կանչի նօթերով քալող յաղթական շքերթի շարքերն են: Անոնք մեր Արցախի հերոսներն են:*

## ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹԻՒՆ ՄԻ ԲՌՈՒՆՑՔ ԴԱՌՆԱԼՈՒ

*Շարունակուածէջ 7-էն*




*Դա էր պատճառը, որ Ատրպէյճանը հերթական անգամ փորձեց լուծել ղարաբաղեան խնդիրը ռազմական ճանապարհով: Լայնամասշտաբ օպերացիա ձեռնարկելով իրենց զինանոցում եղած սպառազինութեան ամբողջ սպեկտրի կիրառմամբ:*

Ինչպէ՞ս կը գնահատէք Հայոց բանակի գործողութիւնները այս կարճատեւ պատերազմի ընթացքին:

*Փառք ու պատիւ մեր զինուորներին, մեր ժողովրդին որ յուսախաբ արեցին ազերիներին, իրականացնելու իրենց ստոր քայլը: Մեր յաղթանակը նաեւ ապտակ էր Թուրքիային, որը հրահրեց այս արկածախնդրութեան: Սա նաեւ յստակ ուղերձ էր Ռուսաստանին ասելով, որ ռազմավարական դաշնակիցը նման ձեւով չպիտի վարուի իր տարածաշրջանում միակ հաւատարիմ դաշնակցի նկատմամբ: Դիմագրաւելով այս փորձութիւնը նաեւ մենք աշխարհին ցոյց տուեցինք մեր միասնական համախմբուածութիւնը եւ մեր մարդկային կերպարը ի տարբերութիւն Ատրպէյճանի վայրագ ցեղի, արիւնախում, ծերերին ականջներ ու գլուխ կտրելու ու այն ցուցադրաբար աշխարհին ցոյց տալով, դրանով իսկ մէկ անգամ եւս փաստելու որ Թուրքը մնում է Թուրք եւ 21րդ դարում նոյնպէս, իրօք որ չարիքի առանցքն են երկու պետութիւններ էլ՝ Ատրպէյճանը եւ Թուրքիան: Միջազգային հանրութիւնը պէտք է հետեւութիւն անի այս բոլորից եւ միջոցներ ձեռք առնի պայքարելու այդ առանցքի դէմ, որ յղի է իր տերորիստական եւ այսպէս կոչուած «իսլամական պետութիւն», արիւնախումների հովանաւոր տալ, որոնք սպառնում են համայն աշխարհի անվտանգութեանը: Այսքանից յետոյ, Ատրպէյճանը եւ Թուրքիան պէտք է հասկանան, որ Արցախի հարցը ռազմական ճանապարհով լուծելու մոլուցքը ուտոպիա է: Եւ, եթէ մէկ անգամ եւս փորձեն խախտելու հրադադարը, ապա թող վստահ լինեն, որ հայ ժողովրդի հաւաքական ուժի շնորհիւ որպէս երկիր ի սպառ կը վերանան աշխարհի քարտէզից:*

**Ն.Ս.Մ.Մ ԱՐՈՒԵՍՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ**

**Կը Կազմակերպէ**

**ԱՍՄՈՒՆՔԻ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ**

**Տարիքային Բոլոր Խումբերու Համար**

**Ղեկավարութեամբ՝**

**Արուեստի Վաստակաւոր Դափնեկիր, Ասմունքող Եւ Հեռուստալրագրող**

**ՆՈՒՆԷ ԱՒԵՏԻՍԵԱՆԻ**

**Փորձերը տեղի կ՛ունենան ՀԿԲՄ-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ 1060 N.Allen Ave. Pasadena .ca 91104**

**Արձանագրութեան Համար Դիմել՝**

**Տիկ. Արմինէ Լաչինեանին Հեռ. 626-372-4662**

**Պր. Յարութ Տէրվիշօղլեանին Հեռ. 323-351-8001**

## ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ...

*Շարունակուած էջ 8-էն*

*են Հայաստանին ու Արցախին նեցուկ կանգնելու Ռուսաստանի պատրաստակամութեանը: Եթէ դէպքերի զարգացումը այս ձեւով շարունակուի ու Հայաստանը ճանաչի Արցախի Հանրապետութիւնը, տեղեկատուա-կան աղբիւրները լուրեր են տարածում, որ երկրորդ ճանաչողը կը լինի Ռուսաստանը: Արդեօ՞ք կ՚իրագործուի այս տարբերակը, ժամանակը ցոյց կը տայ...: Զնայած Մինսկի խմբի համանախա-գահներից մէկը Ռուսաստանն է, մի բան պարզ է. Ղարաբաղի հիմնախնդրի կարգաւորման բանալին Ռուսաստանի ձեռքում է:*

*Ռուսաստանի դաշնութեան փոխվարչապետ Դմիտրի Ռոգոզինը Ապրիլի 7-ն Պաքւում յայտարարել է, որ 2010 թ. կնքուած պայմանագրի համաձայն Ռուսաստանը շարունակում է Ատրպէյճանին մատակարարել մօտ մէկ միլիարդ տոլլարի արդիական զէնքեր, որոնց առաքումը կ՚աւարտուի 2017 թ.: Իսկ աւելի վաղ ՌԴ ԱԳՆ պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան յայտարարել է, որ «Սպառազինութեան ցանկացած մատակարարում, ինչպէս Հայաստանին, այնպէս էլ բարեկամ Ատրպէյճանին, մեր կողմից իրականացւում է տարածաշրջանում ուժերի հաւասարակշռութեան մանրակրկիտ հաշուառման անհրաժեշտութեան պահպանմամբ»:*

*Ըստ Լէոնիդ Իվաշովի Ատրպէյճանը Արցախից արդէն 2-3 անգամ աւելի զինտեխնիկա ունի, իսկ Ատրպէյճանի ստանալիք մէկ միլիարդ տոլլարի զինտեխնիկայի դիմաց Հայաստանի 200 միլիոն տոլլար վարկի դիմաց Ռուսաստանից ստանալիք զինտեխնիկան կարո՞ղ է հաւասարակշռութիւն ստեղծել մէկ միլիարդ տոլլարի զինտեխնիկայի հետ, այնպէս, որ ամէն ինչ կախուած է տուեալ ժամանակի քաղաքական պայմաններից ու հանգամանքներից:*

*Նշենք նաեւ. եթէ Ատրպէյճանը մի փոքրիկ յոյս ունէր Ղարաբաղը իր ձեռքում պահելու, քառօրեայ պատերազմից յետոյ այդ յոյսը հաւասարուեց զրոյի:*

*Քանի որ հրադադարը տեղի է ունեցել Արցախի Հանրապետութեան բանակի յաղթարշաւի շնորհիւ եւ միջազգային հանրութեան գերակշռող մասը զօրավիգ է Արցախի Հանրապետութեան, Հայաստանի ու Արցախի հանրապետութիւնները պէտք է օգտագործեն այս առիթը, ճնշում բանեցնելով Մինսկի խմբի համանախագահների վրայ, իրագործելու հայկական հետեւեալ պահանջները.*

*1. Արցախի Հանրապետութիւնը պարտադիր պէտք է մասնակցի Արցախի հարցի լուծման բանակցային գործընթացին, մանաւանդ, որ 1994 թ. հրադադարի անմիջական մասնակիցն է եղել նա:*

*2. Լուծել դիպուկահարների հարցը, նրանց ընդմիշտ հեռացնելով սահմանային շփման գծից, այսինքն վերացնել նրանց գոյութիւնը:*

*3. Պարտադրել համանախագահներին՝ ստուգող սարքերի տեղադրման իրագործումը սահմանային շփման գծի ամբողջ երկարութեամբ՝ հրադադարը խախտողին բացայայտելու համար:*

*4. Համանախագահների միջոցով լուծել Արցախի Հանրապետութեան օդանաւակայանը գործածելի դարձնելու հարցը:*

### ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆ

***ՌԱԶՄԻԿ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ ԵՒ ԱԴՐԻՆԷ ՅԱԿՈԲԵԱՆ***
***ԱՄՈՒՍՆԱՑԱՆ***

*9 Ապրիլ, 2016 Պըրպէնք*

*Մեր շնորհաւորութիւններն ու երջանիկ կեանքի ջերմ բարեմաղթութիւնները ամուսնացեալ զոյգին եւ անոնց ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար մեր աշխատակից եւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան ատենապետ՝ Տէր եւ Տիկ. Յարութ եւ Ռոզին Տէր Դաւիթեանին:*

*«Մասիս»*

### ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*Մի ոմն գնահատելով «Մասիս» շաբաթաթերթի բովանդակութիւնը $100 կը նուիրէ անոր բարգաւաճման ֆոնտին:*

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**
**«Մասիս» Շաբաթաթերթին**
**T: (626) 797-7680 massis2@earthlink.net**

**OFFICE SPACE FOR RENT**
**IN PASADENA**
**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**
**1060 North Allen Ave**
**Pasadena, CA 91104**
**Գրասենեակները վերանորոգուած**
**եւ յարմար վարձքերով**
**Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝**
**(626) 398-0506**

## ԹՈՒՐՔ ԴԱՍԱԽՕՍ ԻՒՄԻՒԹ ՔԻՒՐԹ

*Շարունակուած էջ 13-էն*

*եան իր առինքնող կնիքը դրաւ բացման ու փակման խօսքերով: Բացման ու փակման աղօթքը կատարեց Արժ. Տ. Ղեւոնդ Քհնյ. Քիրազեան, որ ներկաներուն փոխանցեց Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ողջոյնի ու շնորհաւորանքի խօսքը, նաեւ ներկաներուն հետ բաժնեկցեցաւ այնթապցի ծնողներու զաւակ ըլլալու հպարտութիւնը:*

*Պաշտօնական յայտագիրին աւարտին հանդիսականները կոկիկ հիւրասիրութեան մը արժանացան միութեան կողմէ եւ առիթ ունեցան զրուցելու բանախօսին հետ:*

***ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ***
***Ա. Մ. ՄԻՈՒԹԵՆԷՆ***

## ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒՆ ԱՆԱՂԱՐՏ ՊԱՀԵՆՔ

*Շարունակուած էջ 14-էն*

*Օտար տիրապետող եւ գերիշխող ազգեր ուզած են տարածքային, քաղաքական եւ մշակութային լծակներով պարտադրել իրենց լեզուն ու կենցաղավարութիւնը նուաճուած ազգերու, իւրացնելու համար զանոնք: Այսպէս ըրած են պարսիկները, յոյները, արաբները, թուրքերը, եւրոպացիներն ու ռուսերը... ենթակայ ազգերու մէջ լեզուամտածողական համակարգը խաթարելով եւ փոխելով՝ այլասերելու եւ հեռացնելու համար զանոնք իրենց ազգային ակունքներէն:*

*Ներկայիս տնտեսական եւ լրատուական համացանցային ու դիմատետրային լծակները կը գործադրուին այդ նպատակներուն հասնելու համար եւ Հայաստանի ուսեալ խաւի գրեթէ 50 տոկոսը ենթարկուած է այդ հոսանքին:*

*Արդեօք ժամանակը չէ եկած հայերէնի բառապաշարի մաքրագտումը եւ լատինատառ հայերէն գրելաձեւը կասեցնելու Հայաստանի մէջ...:*

*Արդեօք այս ընթացքը ազգային անվտանգութեան խնդիր չէ՞...:*

*Յուսանք, պատասխանատու պետական անձինք ողջմտութիւնը կ՛ունենան լրջօրէն վերլուծելու վերոյիշեալ հարցը եւ գործնական քայլեր կ՛առնեն, վասն հայերէն լեզուի սիրոյն...:*

## «ՃԵՂՔԵԼՈՎ ԵՓՐԱՏԸ»

*Շարունակուած էջ 15-էն*

*աղիտալի երկրաշարժի առիթով: Իր մասնագիտութեան շնորհիւ (մանուկներու հոգեբոյժ) ջանացած է աղէտի գօտիի երեխաներուն բարոյական կորովը բարձրացնել եւ հնարաւոր չափով ամոքել վէրենք, համակ սէր եւ ակնածանք ցոյց տալով անոնց:*

*Պատմա-գեղարուեստական եւ ականատեսի ապրումներով լիցքաւորուած յուշապատում մըն է «Ճեղքելով Եփրատը», որուն մէջ առկայ է գրողին անսահման սէրն ու երախտագիտութիւնը հանդէպ ցեղասպանութիւն տեսած իր մեծ հօր եւ պահանջատէր հայ ժողովուրդին:*

***Գ. ՄՈԼՈՅԵԱՆ***

### ՍԱՀԱԿԵԱՆԻ ՕՐ

Սահակեան Վարժարանի Սանուց Միութեան
կազմակերպութեամբ աւանդութիւն դարձած
«Սահակեանի Օր»ուան ընկերային հաւաքը
տեղի պիտի ունենայ Կիրակի, 15 Մայիս, 2016,
կէսօրէ ետք ժամը 4:00ին,
Փասատինայի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ,
1060 North Allen Avenue, Pasadena CA 91104:
Կը խնդրուի յարգել Սահակեանցիի ժամադրութիւնը:
Ճոխ հիւրասիրութիւն, անակնկալներ...
Մուտքը ազատ

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**

*** $50,00 * $100,00 (first class) for USA**
**$ 125,00 (Air Mail) for Canada.**
**$ 250,00 (Air Mail) Overseas.**

**Name:** ----------------------------------------
**Address:** ----------------------------------------
**City:** --------- **State:**--------- **Zip Code:**------
**Country:** -------------
**Tel :**---------------------- **Email:** -------------------------

# ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՆՐԱՀԱՒԱՔ

## ԹՐՔԱԿԱՆ ՀԻՒՊԱՏՈՍԱՐԱՆ

6300 Wilshire Blvd., Los Angeles / Crescent Heights

## ԿԻՐԱԿԻ, 24 ԱՊՐԻԼ, ԺԱՄԸ 1-ԻՆ






ՀԱՆՐԱԿԱՌՔՈՎ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ՝ ԿԷՍՕՐՈՒԱՆ ԺԱՄԸ 12ԻՆ

**ՄԵԿՆՈՒՄԻ ԵՒ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՎԱՅՐԵՐ**

ԿԼԷՆՏԷՅԼ
ՍԱՆԹԱ ԱՆԱ
ՓԱՍԱՏԻՆԱ
ՄՈՆԹԵՊԵԼԼՕ
ՎԷՆ ՆԱՅՍ
ԹԱՀԱՆԿԱ
ԷՆՍԻՆՕ
ՔԱՆՈԿԱ ՓԱՐՔ
ՆՈՐԹ ՀԻԼԶ
ՊԸՐՊԵՆՔ
ՆՈՐԹ ՀՈԼԻՎՈՒՏ
ՀՈԼԻՎՈՒՏ

**WWW.RALLYFORJUSTICE.ORG | 1(877)477-2559**

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ